



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17657

1878

2010

95
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

ԵՆԹԵՐՅԱՐԱՆ

ՀԱՐՑ ԵԿ ՄԱՐՑ ՀԵՄԱՐ

ԳՐԵՑ

Ա. ՏԵՐ ՍՈԲԴԱՆԵՆՅ

825 |
»Մի՛ թոյլ տոր, Տե՛ր, բնձ ահամել
Ամուսն առանց ծովզանց,
Վանդակին առանց թաշնոյ,
Փեթակին առանց մեզոփ,
Տունն առանց մանկանց ու
գ. ՀԻՖԿՕ

2001

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ

ԵՐԻՍՈՒՅԹԵԱՆ ԽԱՆ ՄԵԶԵՆԱՅԱՐԿ. ԹԻՒ 17

370.1
S-52

— 1878 —

370.1 ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
5-52 ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ
ԴՆԹԵՐՑԱՐԱՆ

ՀԱՐՑ ԵՒ ՄԱՐՑ ՀԱՄԱՐ

ԳՐԵՑ

Ս. ՏԵՐ ՍԱՐԳՍԵՆՅ

»Մի՛ թոյլ տար, Տէ՛ր, ինձ տեսնել
Ամառն առանց ծաղկանց,
Վանդակին առանց թռչնոց,
Փեթակին առանց մեղուի,
Տռնն առանց մանկանց »:
Վ. ՀԻՒԿՈ

Կ. ՊՈԼԻՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Մ. ՏՆՏԵՍԵԱՆ
ԵՌԻՍՈՒԹԵԱՆ ԽԱՆ ՄԻԶՅԱՑԱՐԿ. ԹԻՒ 17

Printed in Turkey

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԿՐ ՍԱՐԳԱՆԵՆՑ

ՏԵՎԿԱՆՑ

ՍԻՐԵԼԻ ՀՕՐՄ ՅԻՇԱՏԱԿԻ ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ

ԵՒ ՍԻՐԵԼԻ ՄՈՐՄ

ՄԱՐԳԱՐԻՏԻՆ

ԲԱԶՄԵՐԱԼԽ ԾՆՈՂԱՑՍ

ԿԸ ՆՈՒԻՒՐԵՄ

ԱՅՍ ԹՈՒՂԹՆ ՈՒ ԳԻՐ

ԶՈՐ ԻՐԵՆՔ ՇՆՈՐՀԵՑԻՆ ԻՆՉ

ՈՐԴԵԿԻԾ

5-83

39



8746

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

ԱՌ. ԸՆԹԵՐՑՈՂՄ

Թէկ վարժապետ կամ մանկա-
վարժ չեմ, բայց որչափ առիթ ունե-
ցեր եմ մանուկներու կեանքէն մէկ-
երկու պարզ գասեր առնել, կ'ուզեմ
պատմել այն ծնողաց, որոնք կը սիրեն
լսել տղայոց վերաբերեալ խնդիրներ :

Ա. Տ. Ա.

Երէ ո'չ դարձջիք եւ եղիջիք
իբրեւ զմանկոփ, ո'չ կարէք
մտանել յարքայուրին երկնից :
ԱԽԵՏԱՐԱՆ

ԱՄԵՆ ոք գիտէ թէ՝ հայրեր և մայրեր
ծնան աշխարհիս ամենէն երեւելի և բարե-
րար մարդիկ, հայրեր և մայրեր ծնան աշ-
խարհիս ամենէն եղեռնադործ և աւերիչ
մարդիկ. և թէ ծնողաց ձեռքն է բարձրա-
ցընել զմարդն, ծնողաց ձեռքն է նուաս-
տացընել զայն :

Մոլորաշաւիլ մարդիկ՝ մոլար ծնողաց
մանուկներն են. մոլորած մարդիկ՝ մոլո-
րութեան ժողովուրդ, աղդ և ընկերութիւն
կը կաղմեն :

Ազգի մը որ և է ուղղութիւն տուող
շեկը հարց և մարց ձեռքն է. եթէ այդ

Ճեռքեր իմաստութեամբ չըլվարեցին նաւը, երկրորդ յոյս վարժապետաց վրայ է. և եթէ ասոնք ալ անզօր գտնուին, այլ եւս այդ նաւի ուղղութիւնն հողմեր կու տան և ալիքներ անոր նպատակն կ'որոշեն :

Ուստի ո՛վ որ կ'ուզէ ազգի մը ապագան ներկային մէջ տեսնել, պէտք է ընտանիքներուն և դպրոցներուն դիմէ, մանկական կենաց աշխարհի մէջ շրջի և այն ազգի ապագայ բաղդին վրայ համարձակ վճիռ տայ:

Ապաքէն ընկերական կենաց մէջ մտածանթիւ անհամար ապականութեան տարերներ՝ ժառանգական յաջորդութեամբ կը շարունակին, հայրեր իրենց որդւոց, որդիք իրենց թոռանց կ'աւանդեն և այսպէս մինչև ցվերջ մարդ իւր ապականութենէն, իւր մոլորութենէն չէ կարող ազատիլ:

Այս ժառանգութեան պարզ հաշուոյն մէջ երբեմն մարդ ապուշ ապուշ իւր մոլորութեան՝ թշուառութեան հետքեր կը խուզարկէ և չէ կարող գտնել. վասն զի ինքնինքն չի հաշուեր, չի գիտեր թէ ինքն է իւր մոլորութեան հեղինակ և առաջնորդը :

Այս անգէտ՝ մոլար՝ թշուառ արարածներ, մոլորութեան զաւակ կը ծնանին. և կը արանջան թէ ի՞նչ է այս թշուառութիւն :

Արդարութեան խստութեամբ պէտք էր ասել կարգ մը ծնողաց, եթէ զաւակ չէք

գիտեր մեծցլնել, ինչո՞ւ կը ծնանիք :

Յաւեր կը յշանաք, վէրքեր կը ծնանիք. նախ ձեզ և ապա ձեր շուրջ պատող առողջ ընկերութիւնն կ'ախտաւորցընէք :

Եթէ ծնողք մանուկներ ունենալու գիտութենէն առաջ՝ նախ մանուկն շահել պահելու գիտութիւնն ունենային, ընկերութեան մէջ ա՛յսչափ դատապարտելի զեղծմունք, ա՛յսչափ ապականութիւնը յառաջ չէին գար:

Երջանկութեան և թշուառութեան օրեր, դարեր և ժամանակներ մեր ձեռքն է. եթէ թշուառութիւնն իսպառ չնցել անբնական համարելու չափ դժուար է մեզ, բայց զայն մեղմացընել միշտ կարող ենք:

Արդարեւ կարող ենք մեր ժամանակին՝ մեր ուզած գոյնն և երեւոյթ տալ. այլ երբ ինդիր միջոցներուն կու գայ, շատ անգամ անընդունակ, անընտրող և անսպատակ մարդիկ կը դառնանք:

Մեր վիճակի փոփոխութեան միակ միջոց՝ մեր մանուկներն են, որոց ուղղութիւն մեր ձեռքն է:

Եթէ կ'ընդունինք որ երախան ծնանելու ժամանակ բոլորովին տկար և օգնութեան կարօտ վիճակ մը ունի, եթէ զինքն խանձարուրի մէջ չի փաթաթեն՝ ինքնին չի կրնար հագուիլ, եթէ կաթ չի տան՝ չէ կա-

բող կերակուր գտնել, եթէ վերջապէս լեզուն մեզնէ սովորելով կը խօսի, թէ մեր շարժումներն տեսնելով կը շարժի, ինչո՞ւ կը վարանինք ընդունիլ թէ մանուկն նոյնպէս մեր վարքն ու բարը կ'ստանայ :

Մանուկներ գրեթէ բոլորովին անկերպարան կը ծնին և ամեն կարողութիւն հետզհետէ իրենց ծնողքէն կ'ստանան և 'ի վերջոյ անոնց տիպարն կը դառնան, բարի կամ չար, երջանիկ կամ թշուառ :

Հայրն ու մայր իրենց մանկան հայելին են, և մանուկն իւր հօր ու մօր հայելին . ծնողք իրենց վարքն ու բարը, անցեալն ներկան և ապագան իրենց մանկան մէջ պատկերացած կը դառնեն, և մանուկն իւր վարքն ու բարք՝ իւր ծնողաց վարուց մէջ :

Ուստի աէտք է ասել թէ յիսկըրան

Մանուկներ անմեղութիւն են,

Մանուկներ բարութիւն են,

Մանուկներ լցու են,

Մանուկներ ազատութիւն են,

Մանուկներ ուրախութիւն են,

Մանուկներ յաջողութիւն են,

Մանուկներ ժառանգութիւն են,

Մանուկներ նորոգութիւն են,

Մանուկներ մարդկային անմահութեան երաշխաւոր խորհուրդներն են :

Եթէ այս յատկութեամբ՝ այս կոչմամբ

մեծնան մանուկներ, անփիջապէս կ'սկսի մանուկներու արքայութիւն, որով ընտառ նիկներ նորոգուելով և' ազդեր կը վերականգնին և' ընկերութեան զանազան չէնքեր՝ հաստատուն հիմանց վրայ կը բարձրանան :

Բայց այս թագաւորութիւն փութացը նելու պայմանն այն է, որ միանդամ չափահաս մարդիկ վերստին ծնանելով մանուկ դարնան, մանկական անմեղութիւն դգենուն, որպէս զի կարենան անմեղութեան մանուկներ ունենալ :

Եւ Քրիստոնի միտքն ալ գուցէ այս էր երր ըստւ . «Եթէ ո՛չ դարձիլք և եղիջիք իրրեւ զմանկտի, ո՛չ կարէք մտանել յարքայութիւն երկնից »: Եւ թէ « Յուշլ տուք մանկուոյդ դալ առ իս և մի' արդելուք ըզ դոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն երկնից » :

Քրիստոն իւր առաջին խօսքով՝ երջանկութեան թագաւորութիւն ստանալու համար չափահաս մարդոց մանկական վիճակի անմեղութեան դառնալու կը պարտաւորցնէ . երկրորդ խօսքով՝ բացարձակ կը յայտնէ այն միտք թէ, երկնից արքայութեան ժողովուրդ մանուկներն են :

Եւ արդարեւ երկնից արքայութեան վրայ ինչ աւելի կենդանի օրինակ կամ

գաղափար մը. կարելի էր տալ մեղ՝ քան թէ
ըսել, այդ թագաւորութեան ժողովուրդ
մանուկներն են :

Ուրեմն մանուկներ իրենց հետ արքա-
յութիւն կը բերեն. և եթէ ծնողք այդ թա-
գաւորութեան հետ ծանօթութիւն չունին,
իրենց մանուկներու կոչումն ալ կ'եղա-
նեն, և աշխարհի թշուառութեանց շարու-
նակութեան պատճառ կ'ըլլան :

Եւ երկնից թագաւորութիւն ըսուած
կարելի չէ ստանալ, առանց նաև այդ ար-
քայութեան հիմունք այս աշխարհի վրայ զե-
տեղելու, առանց այս հիման ո՛չ մի տեղ
չէնք մը չի կառուցուիր, ո՛չ մի բարիք չի
մտածուիր :

Այլ միթէ արդի ուղղութեամբ մեծցած
մանուկները քրիստոսի ներկայացուցած մա-
նուկներ են. կամ թէ այն ճշմարիտ թա-
գաւորութիւն կազմող անմեղ ժողովուրդը:
Իւրաքաջիւր ծնողք այս խօսքի պատաս-
խանն թող իրենց խղճէն առնեն :

Այս արքայութեան ժառանգորդ պատ-
րաստող հայր ու մայրը՝ նախ ինքն նոյն ար-
քայութեան որդի վնելու էր, կամ զէթ-
անմեղութեան վրայ համազում և հաւատք
ունենար. որաէս զի կարող վնէր անմեղ
մանուկներ պատրաստել և անոր արդեանց
վրայ հաստատուն յոյսեր ունենալ: Այն

ծնողք որ ինք զինքն չէ կարող երաշխաւո-
րել, իր մանուկն անմեղութեամբ մեծցընե-
լու ոչինչ ապացոյց չունի. զի տեսնուած չէ,
որ գայիչն գառ ծնի. և անոր համար է որ
ակնկալեալ երջանկութիւնն ալ, որ է մա-
նուկներու արքայութիւնն յանհունս կը հե-
տաձգի:

Արդ մեր խօսք մեր սիրելի ազգի մա-
նուկներու վիճակին վրայ է. և ինչ որ այս
ազգի մանկանց վերայ պէտք է խօսիլ, կա-
րելի է Բիւզանդիոնի Հայ տղայոց օրինա-
կաւն և միւս բնակչաց կեանքը բացատրել:

Այլ ինձ քաւ լիցի մեր գաւառացւոց
հաւատքով պարծիլ և ասել թէ, Սուահովն
ուր ուկին է պօլ, և ուր խելքն է առատ,
մանկական կրթութիւնն ալ կատարելու-
գործուած է:

Թէ կ Պօլսոյ և Հայաստանի ընտանեկան
կենաց երեւոյթներ բաւական տարբեր են,
բայց որովհետև այսօր Պօլս՝ իւրեւ լուսա-
ւորութեան կեղրոն համարուած է Հայաս-
տանի մեծ մասին, ուստի ամեն գաւառա-
ցին՝ լուսաւորուելու համար մայրաքաղաքէն
իւր ճրագն վառել կ'ուզէ. բայց իւր ընտ-
րողութեան մէջ տկար վինելով, շատ ան-
գամ լցո տանելու տեղ՝ խաւար կը տանի,
և ինքնին իւր ունեցած լցոն ալ կը փչէ կը
մարէ:

Անոր համար մայրաքաղաքացիք աւելի
գդոց լինելու էին :

Շատ, խիստ շատ ուշ մնացեր ենք այն
միակ ճշմարտութեան վրայ մեր յոցն ու ա-
պաւէն ամիտոփել, թէ այս Ազգ նորոգու-
թեան վրկութեան երես տեսնալիք չունի,
առանց նախ մանուկներու վիճակն հիմնո-
վին նորոգելու : Մեր ծնողը մեզմով չսկսե-
ցին գէթ մենք մեր մանուկներով սկսինք,
ինչ որ մենք տեսնալու էինք գոնէ անոնք
տեսնեն : Սակայն մենք ի՞նչ կ'ընենք, առանց
երբէք սերմեր ցանելու . պառուղ կ'սպասենք
և մերթ կը պահանջենք և կը տրտնջանք
և կը զայրանանք և կը յօւսահատինք, երբ
կը տեսնենք թէ ոչ միայն ձեռնունայն կ'ել-
նենք, այլև երթալով գէպ 'ի յետս կը դի-
մենք, հակառակ ամեն ազգաց յառաջա-
դիմութեան :

Եթէ այսպէս շարունակենք գեռ շատ
փորձանքներ պիտի գայ մեր գլխուն, այն-
պէս որ մեր պատմական տառապանքներ,
նորերը միշտ հիներն մոռցընել տան :

Մեր չորս հազար տարուան ամիք տես-
նող կ'ասէ, թէ այս ազգ դեռ չորս տարե-
կան անփորձ տղայ է :

Պէտք է ուշաբերինք և վրկութիւն մի-
այն մեղմ սպասենք, մի միայն մեր մանուկ-
ներու վիճակէն :

ՄԱՆՈՒԿՆ ԻՐ ՀՕՐ ԵՒ ՄՈՐ ԳՐԿԻՆ ՄԷՋ

Մայրաքաղաքիս Հայ մայրեր մեծաւ մա-
սմբ երախան ծնանելէն վերջ, այլ ևս
մայրական դժուար և միանդամայն քաղցր
պարտաւորութենէն աղատ կը համարին զի-
րենք . և մանկիկն օտար դրկի մը, օտար
կաթի մը կը յանձնեն, արհամարելով բնու-
թեան այն գործիներ, յորում տղայի հետ
անմիջապէս և անոր սնունդն պատրաս-
տած է :

Հին դատ մ'է այս մօր և մանկան մէջ,
որուն վրայ շատ խօսուած է, բժշկական
դատաստաններ եղած են, բայց խնդիրն
ուր որ էր, անդ է և այսօր :

Այլ իմ դատաստանն բարոյական է, լոկ
գանդատ մ' է այն ծնողաց գէմ, որոնք ի-
րենց խնամոց յանձնուած անկարող և անս-
լեզու երախային զրկանքներ կ'ընեն :

Մայրեր իրենց պարտականութիւն կամ
ամբողջ կատարելու էին, կամ երբէք այդ
պատասխանատուութեան լուծի տակ մըտ-
նելու չէին :

Իրաւ է, դիւրին չէ մօր մը ծննդեան
օրէն սկսեալ երախային պէտքեր հոգալ,
բայց այդ դժուարութիւնն է որ մայրական
սէր և գութ և խնամք յառաջ կը բերէ, ո-

ըով և պարտականութեան դգացութեր
կ'աղդէ որդւոյն առ մայրն . ասովէ որ որդւոյն
առ մայրն և մօրն առ որդիս ունեցած
պարտուց և իրաւանց կապերն կ'ամրա-
պնդին :

Ծնողք որչափ վիշտեր կրեն իրենց որդւոց
խնամակալութեան համար , այնչափ
որդեսիրութեան առաւելութիւն կ'ունե-
նան :

Կին մը եթէ ծանը երկունք չըկրէր և
դժուարութեամբ չըյլանար և ցաւօք չըճը-
նէր , իր ծնունդն այնչափ սիրելի չի պիտի
լինէր : Աշխատութեան դժուարութիւն կը
քաղցրացնէ արդիւնքը . բնութեան սքան-
չելի անօրէնութիւններէն մինն է այս :

Եթէ այս օրէնք չը լինէր ծնողին և ծը-
նելոյն մէջ , թերեւ ամբողջ մանուկներ ըն-
կեցիլ լինէին և անխնամ մեռնէին :

Երբ կը տեսնենք մայր մը , որ այնչափ
վիշտերով զաւակ կը ծնանի , և անմիջապէս
ուրիշին կը յանձնէ զայն և երախայի բնա-
կան սնունդն ալ յումպէտս կը վատնէ , պէտք
է ասել , ահա՛ աշխատաւոր մը ; որ մինչև
երեկոյ չարաշար աշխատեցաւ , և իր վարձք
ծով կը նետէ : Այնպիսին կէս մայր անուա-
նելու է . մայր մը որ իւր երախան իւր բը-
նական կերակրէն , իւր օրինաւոր բաժինէն
կը զրկէ իր հանգստութեան համար . և

երկրորդ մայր մը , սանտուն , որ իւր թըզ-
ուառութեան համար ակամայ կը խնայէ իր
կաթը իւր սեփէհական որդւոյն . սա թըզ-
ուառութեան համար ակամայ կը զրկէ իր
որդին , նա իր հանգստութեան համար և
կամաւ այդ զրկողութիւն կ'ընէ :

Տարակոյս չըկայ թէ վարձկան մայրեր
որչափ աղնիւ և պարկեշտ կիներ լինին ,
բայց չեն կարող օտար արգանդի ծնունդ
իրրեւ իրենց բնական զաւակ խնամել . և
ես չեմ կարող ըմբռնել թէ ի՞նչպէս կին
մը երախայի մը վրայ խնամք կրնայ ունե-
նալ , առանց նախ սէր և գութ ունենա-
լու . ուստի չենք կարող սպասել որ նա մեր
երախան՝ մեր սիրոյն չափ սիրէ և պահպանէ :

Մտարերէցե՛ք միանդամ , ո՛րչափ կը վըր-
դովի այդ ողորմելի մայր - ստնտուն , երբ
նա իր փոքրիկ լքեալ մանուկն կը յիշէ , որ
չքաւորութեան համար իր աչքէն հեռու
ասոր անոր գիրկ նետոած է . այս պարա-
գային մէջ միթէ ճշմարիտ սէր և խնամք
կրնայ ունենալ այն օտար երախային վրայ ,
որ իւր որդեկի բաժին կաթը կ'ուտէ , այն
կաթ որ գորովագութ մօր մը կսկծալի ար-
տասուզք խառնուած է :

Կարծեմ թէ հազուագիւտ է այնպիսի
ծծմայր , որ օտար երախային կաթ ուզած-
գամանակ խնայելով կամ ձանձրանալով

շիտայ, վասն զի մայր է սա . նոյն րոպէին իւր մանկիկ կը յիշէ, արդեօք կաթ կու տա՞ն թէ անօթի կը մեռցընեն : Յայնժամ ծծմօր աղփներ կը գալարին, երեւակայութիւն կը բորբոքի, կը զայրանայ և կը նախանձի և գուցէ ծիծը մանկիկի բերնէն քաշէ և ըսէ «է՛հ հերիք ուտես, կարելի է իմ տղաս անօթի է . . . » :

Այսպէս ահա մեր իւակուկ տիկնոջ փափեասուն զաւակը աստին կը զրկուի իւր կարող վիճակին մէջ, և վարձկան անկարող զաւակը, անդին զրկանը կը կրէ օտար մօռէ մը, որով երկուքն ալ իրեւ խորթ մօր զաւակներ կը մեծնան :

Եթէ միայն այսչափ լինէր նորածին մանկան զրկանքներ՝ հոգ չէր . ո՞վ որ զաւակ ունի փորձառութեամբ կրնայ այս ճշմարտութեան վկայել:

Գիշեր է մինչդեռ երախայի բուն ծընողը հանգիստ և անխուսվ կը քնանան առանձին սենեկի մը մէջ, ծծմայրն աստին իր մանկան հետ իրեն յատուկ սենեակ քաշուած կ' զբաղի:

Կէս գիշերն անցեր է, հազիւ թէ քնաց և մեր փոքրիկ շաւարչն երկար օրօրներէ. վերջ, դարձեալ արթնցաւ կույայ կը նուազէ կտի . բայց մեր անքուն վարձկան մօր աչքերն ալ քուն կոխեց, թէ և քունի մէջ

օրօրոց դեռ. կը շարժէ . ի՞նչ ընէ խեղճը, այս երեք չորս օր է կը տառապի անքուն . . . Յանկարծ օրօրոց վար կ'իյնայ, տղայի սաստիկ ճիչ կ'արթնցընէ ահարեկեալ ծծմայրն, կ'այլայի և կը շփոթի, ահովլ լացով ու տըրտնջալով օրորոց կը շտկէ, անմիջապէս կաթտալով ձայնը կտրել կը ջանայ . ոչ այնչափ ՚ի սիրոց շարժեալ իրար կ'անցնի, որչափ երկիւղէն ու պատասխանատուութենէն վախնալով, և սովորականէն տարբեր եղանակաւ կաւ կը պօռայ տղան : Սակայն երախան կաթովն ալ ձայն չի կտրեր, խեղճ կին կ'սկսի տագնապիւ, և զայն լուեցընեւու հնարք կը փնտոէ : «Ո՞վ Աստուած, հոգիս ա՛ռ տղատուիմ, կ'ասէ, այս ի՞նչ պատիժ պատուհաս է, այս ի՞նչ գերութիւն է իմ քաշածն . . . » և կ'սկսի երբեմն կոչու ու կոպիտ եղանակաւ հայհոյել և նզովել . երբեմն որորանի կողերուն զարնել, շան ու կատուի և այլ զանազան այլանդակ և ահարեկեալ ձայներ հանել, որովէս զի Շաւարչն սարսապիի, ձայն կտրէ և քնանայ . . .

Այս միջոցներ երբեմն քնատ ծծմօր հեկեկանքն ու լացը կը լսուի, յուսահատութենէն կու լայ և կը տրտնջայ և կը նզովէ իր կեանք . . . :

իսկ մեր մանկիկն կարծես թէ կ'զգայ այս տրտունջն ու լացը և կ'սկսի ձայն քա-

շել գթալ այն ողորմելի արարածին վրայ,
որ մինչև ցվերջ պիտի համրերէր սակայն՝
Եթէ իրեն արդանդի ծնունդն ըլլար մեր
լալկան Շաւարշը :

Վարձկան մօր վիճակն ոչ միայն երա-
խայի քնոյն և կաթին ժամանակն այսպէս
է, այլ և լցո ցերեկին, զանազան կարիք-
ներու ժամանակ, այլ և բուն ծնողաց խըս-
տապահանջութեանց առթիւ, միշտ տըր-
տունջով՝ մրչու ակամայ կը վարեն իրենց
պաշտօնն, և պէտք չէ մեղադրել զիրենք :

Մեծ ուշադրութիւն պէտք էր տղոց
լացին. ինչպէս յայտնի է, լացը երախայի
կամք և փիճակ բացատրող միակ միջոցն է:
Թէև բնական է տղայոց՝ լացով մեծնալ.
Լացովն է որ լեզուն կը բանայ և խօսիլ
կ'ուսանի, բայց լացին ալ ժամանակ և չափ
կայ, մանաւանդ առանց պատճառի չա-
փահաս տղայք չեն լար. պէտք է տղայի
լաց ինչպէս նաև ամեն շարժում խնդիր
չինել և այնպէս վարուիլ: Բայս այս խըր-
դիր գռեհիկ ծնողքներէն և ծնմայրներէն
հեռի ինդիր մըն է, զոր չեն ուզեր ըմբըռ-
նել և սերտել, թէև բնութիւն այդ ամեն
կարողութիւն տուած է մօր մը:

Այսպէս՝ վարձու տուած մանուկն հուսկ
ուրեմն ծծմօր գրկէն կ'առնեն, որ արդէն
օտար, երկոտ, նախանձոտ և իւր բնա-

կան մայրն չի ճանաչող դարձեր է :

Կան ալ որ իրենք կը կերակրեն իրենց
երախան, ասոնք ամեն յարդանաց արժա-
նի են, թէև իրենց պարտքն է կը կատա-
րեն. կան ծծմայրեր ալ, որոնք կ'աշխատին
բնական մօր չափ իրենց պարտք կատա-
րել. և սակայն միշտ անքնական է իրենց
աշխատութեան ճիգը :

Այս մասին բարեբազդ են Հայաստան-
ցի մայրերը, ուր հազիւ երբեմն ծծմայր
կը վարձեն և այն միայն ծանր հիւանդու-
թեանց պատճառւ. ուստի մայրեր իրենց
ծնած երախայի բնական մայրն են, և ե-
րախայք իրենց բուն մօր երախայք: Ասոր
համար է որ մանուկն չափահաս լինելէն
վերջ, եթէ պատահի անիրաւութիւն գոր-
ծել ընդդէմ մօրն, մայրն այս խօսքով
կ'սպառնայ անոր. « կաթս աչքիդ դէմ գայ
կամ հարամ ըլլայ »: Նոյնպէս և որդին սպա-
տազանցութեան պարագաներու մէջ,
« Տուած կաթը կը յիշեմ, եթէ ոչ . . . »
կ'ըսէ և կը զղայ մօրը դէմ յանցանք գոր-
ծելէ: Այսպէս կաթը մօր իրաւունք պահ-
պանելու գրեթէ ամենէն փափուկ և նուի-
րական պարտք կը յիշեցընէ որդւոյն. —
արդարու ճշմարիտ երախտիք մօր : իսկ
վարձու կաթ կերող երախան գուցէ իր
ծծմօր տրուած վարձքն յիշէ : ինչպէս որ

եթէ կովի կաթ՝ ուտէր, կովին երախտաւալարտ կը մնար. բայց այս տրտունջ մանուկներ իրենց կաթ՝ կերած ժամանակ կ'ընէին գուցէ, եթէ լեզու ունենային :

Հայրեր և մայրեր պաշտպանելու են այն անմեղ էակը, որ երբէք խօսող լեզու չունի, որ իւր իրաւունք պաշտպանէ, և ոչ կարող ձեռք ոտք, որ իւր պէտքեր հոգայ. իւր կեանքն ու մահ իւր ծնողաց ձեռքն է. ուստի և կարելի է ըսել, այն ծնողք, որք նորածին մանկան պիտոյք անձամբ հոգաւու պարտքէն կը խուսափին իրրև չարչարանքէ, մանկան կենաց միւս շըջաններու մէջն ալ անփոյթ կը կենան, և խեղճ տղան միշտ լքեալ կը մնայ և 'ի վերջոյ ինքն ալ փոխարէն կը լքանէ իւր ծնողք, երբ նոքածերանալով կը տկարանան կը մանկանան, և իրենց որդւոյն օդնութեանը կը կարօտին :

Ինչո՞ւ ուրեմն ծնանիլ երախայ, եթէ հոգալէ պէտք էր խուսափիլ, ինչո՞ւ այս առթիւ օտարութեան, ատելութեան, զըրկանաց, պառակտմանց, ապերավստութեան, վրէժիսութեան և այլ հազար ու մէկ շարսերմունք ցանել ընկերութեան ագարակին՝ աշխարհիս մէջ, որ ենեն և բարի սերմերն հեղձուցանեն և խափանեն :

Ոնոնք որ մեր այս դիտողութիւններ

չափազանց կը համարին, այնպիսեաց միայն այսչափ ըսեմ թէ, ամենէն աննշմարելի և խորարմատ ունակութիւններէն մաս մը՝ մանկունք իրենց կաթնկեր վիճակէն կ'ըստանան. և ինչ որ կաթին հետ կը ճաշակեն, մահուան օր կը մարսեն :

Նշմարելի մոլութիւններ աւելի գիւրաւ մոռցընել կարելի է քան թէ աննշմարելին, որ միշտ թագուն կ'արծարծէ իւր թոյնը :

Վերջապէս տղայք իրենց կաթնկեր վիճակէն սկսելու է կատարեալ պարտաւորութեամբ դարմանել և կրթել, թէև այդ հասակին մէջ կարծենք թէ ամեն բան կը մոռնան, բայց և ամեն բան կը պահեն :

Հայոց ազգի մանուկներու արքայութիւն այն օրէն կ'սկսի, երբ ամեն Հայ մայրեր իրենց մանուկներու բուն մայրեր կը լինին, մանաւանդ թէ դաստիարակ մայրեր կը դառնան :

ՄԱՆՈՒԿԻՆ

ԻՒՐ ՀՕՐ ԵՒ ՄՈՐ ՍՏՈՒԵՐԻ ՇՈՒՐԶ

Մէկ տաղտկացուցիչ դժուարութենէն կ'ազատուին ծնողք, երբ մանուկն կաթէն կը կարեն և նոր վարձեալ տատայի մը գիրկ կը յանձնեն զայն. խեղճ տղան դեռ քանի

քանի մայրերու , տատաներու և անոնց տեսակ տեսակ վարուց և սովորութեանց պիտի վարդուի մինչև որ մեծնայ փոքր ինչ :

Արդէն մեր Շաւարշ երեք տատայ փոխեց երեք չորս ամսուան մէջ՝ իւրաքանչիւրէն մէկ մէկ սովորութիւններ պահելով իր մոքին մէջ , ներկայ տատան չորրորդն է . հազիւ քանի մի օր անցեր է , « Մեր այս տատան ալ աղէկ չի նայիր տղային » ասելով տրտունջ կ'սկսի . արդէն երախան չուզեր անոր գրկին վարդուիլ , դեռ թագուկ ծծմայրն կ'ուզէ , իւր վարձկան մայր կը փնտռէ : Շաւարշ անհանգիստ՝ միշտ կուլայ , իւր մօր գրկէն ու գորովանքէն կը խուսափէ , իւր հօր բաղուկներ կը մերժէ , և միայն իւր մայր՝ ծծմայր կը փնտռէ : ի՞նչ արդար վրէժխնդրութիւն է այս մերժումը :

Ի՞նչ ընելու է այս տղային հետ , տէ՛ր Աստուած , գիշեր և ցորեկ կուլայ . տատան կ'սկսի իւր ամեն հնարքներ 'ի գործ դնել , տղայի համակրութիւն շահելու համար , բայց 'ի զուր , երբեմն ահարեկիչ , այլանդակ ձայներով կը վախցընէ . խարէութիւններ կ'ընէ , երբեմն ալ կը կսմթէ գաղտուկ տեղեր . . . ի՞նչ ընէ , հարուստի տուն է , լաւ է , պէտք է տղային հետ յարմարիլ , որ չարձակեն զինքն , և սակայն մեր անհամբոյր Շաւարշն չի սիրեր զայն : Վերջապէս

այս տատան ալ կ'արտաքսուի :

Ի՞նչ մեծ բարեբաղդութիւն , ծծմայր որ հրաժարելով զիւղ գնացեր էր իւր ցամքած կաթի վերջին կաթիներ իւր փոքրիկ Օհանին ջամբելու համար , ահա վերադարձեր և ընդունուեր է իւր տիրուհիէն . բայց ծըծմայր թագուկ այս անգամ խիստ թագուն տիրութիւն մը ունի զոր չուզէր յայտնել . նա երր իւր Շաւարշն կը տեսնէ , կը խնդայ բայց սիրոյ և նախանձու արտասուզ կը թափէ : Ի՞նչ կայ թագուկ , կը հարցընէ տիրուհին , ծծմօր արտասուզ նշմարելով . — ի՞նչ պիտի ըլլայ կ'ըսէ մտքէն մեր թշուառ ծըծմայր , իմ Օհանս քո Շաւարշի համար սեւ հողերու մէջ դրեր են . տղաս անօթի մեռցուցեր են . . . :

Փողով այս տիրուր պատկերն պէտք է նկատել այն երեւոյթներ , որ մանկութիւններու ծնողաց ստուերի չուրջ դարձած հասակին կը պատկերացընեն ընտանեկան յարկին տակ :

Ոհա մեր Շաւարշն սկսեր է թաթիկներու և երբեմն տոտիկներու վրայ քալել :

Կայ աշխարհնս մէջ այնչափ սիրուն , այնչափ քաղցր առարկայ , քան մանկան այս հասակի զիւռու թեքթեքումը , կորիկ թաթիկներու շարժուածք , կիսատ միսատ այլ մշտախօս լեզուի կախարդիչ խօսքն ու ձայն , որ երկնային նուագի մը չափ կը յափշտա-

կէ և կը նորոգէ ծնողք :

Ահա մանկան այս սքանչելի հասակին մէջ, վնասակար կենդանիք, գաղաններ անգամ անոր քաղցր և անխառն անմեղութիւն կ'զգան և կարծես թէ պահ մը կ'սթափին իրենց գաղանութենէն . հազիւ կը պատահի գաղան մը որ մանուկներուն մնասէ :

Մարդոյն այս առաջին հասակին մէջ բընութիւն իւր գաղտնի զօրութիւն սպառածէ, այնպէս որ գուցէ մանկութեան ժամանակ աւելի կատարելութիւն ունի, քան թէ մանուկն չափահասութեան ժամանակ :

Սիրուն մանուկներ արբեցուցիչ անապակ զինւոյ բաժակի կը նմանին . նա երբ թաթիկ կը շարժէ, երբ սիրուն ձայն կամ խօսք մը կ'արտարերէ, մայրը իւր սիրով կ'արբեցընէ, և հայրն կը զինովցընէ և զայն սարէ սար, քարէ քար կը ձգէ, կ'արիացընէ զայն ամեն դժուարութեանց դիմադրել, որպէս զի իւր սիրելի մանկան վիճակը և ապագան պատրաստէ :

Մայրը արդէն իւր զաւակի գերինէ, առող մէն մի շարժուածք, մէկ մէկ յոյս, ուշախութիւն և կեանք կը ներչնչեն, նա կը մոռնայ կրած և կրելիք վիշտեր, արդէն զիշերուան քուն և ցերեկուան հանգստութիւն անոր զոհած է :

Երբեմն սիրոյ արբեցութիւն այնչափ կը

ծանրանայ ծնողաց զգացմանց վրայ, որք մանկան հաճոյին և հանգստութեան համար ամեն միջոց, ամեն զոհողութիւն գործադրել կը պահանջեն, առանց երբէք ուշաբերելու թէ երկամեայ կամ եռամեայ մանուկը նոյնպէս յատուկ կրթութեան այնչափ պէտք ունի, որչափ կերակրոյ, հանդերձի և առղջութեան :

Կարդ մը ծնողք չատ անգամ մանուկն միայն փափայել կը մտածեն անբնական եղանակաւ, որով ոչ միայն փափկութեան մէջ կը տկարանայ մանուկն այլ և հոգին կը հիւանդանայ . անոր միտք և սիրոտ տխուր սովորութեանց գէշ ծրար մը կը դառնայ :

Մանկութեան այս հասակը ամենէն ընց դունակ հասակն է : Ծնողք ամենամեծ զգուշութեամբ մանկանց զգացումներ, յօժարութիւնք, շարժումներ մասնաւրապէս իրենց խնդիր շնելու են, կամ թէ այսպէս ըսեմ, մանուկներու շարժումներ իրենց համար իրեւ դաս սերտելու են . որպէս զի կարենան ըստ այնմ վարուիլ, ըստ այնմ դաստիարակել զանոնք :

Բայց ցաւելով կ'ըսենք, այսօր ո՛րչափ ծնողք կան որ մեր այս դասառութեան խնդիր երբէք չեն կարող ըմբռնել . — է՛հ, կ'ըսեն, այս մարդն ելեր ի՞նչ գայլու աւետարան կը կարդայ մեր գլխուն . հայրեր ի-

ըենց մանուկիներէն դա՞ս առնելու են . . . :
Այո՛, առանց մանուկիներու հետ մանուկ
դառնալու, դժուար է հասկընալ և ուղղել
դանոնք :

Արդ թողլով ծնողաց այս վիճակ, խօս-
սինք սաւաւ ինչ, անդրանիկ մանկան վի-
ճակին վրայ :

Ծնողք կրկին ուշադրութիւն ընելու են
իրենց անդրանիկ զաւակին վրայ . զի անդ-
րանիկն ինչ ուղղութեամբ որ մեծնայ, նոյն
դրութեամբ կ'ընթանան երկրորդ, եր-
րորդ զաւակունք : Անդրանիկն միւս եղ-
բարց մի միակ օրինակն է :

Ընդհանրապէս անդրանիկներ իրենց ծը-
նողաց առաջին ու թափ գորով գգուանաց
պատահելով, բնական է որ ո՛չ միայն ան-
հանդարտ, այլ մանաւանդ խստապահանջ
և նախանձոտ կ'ըլլան :

Աւան զի անդրանիկն տան մէջ միայնակ
մանուկն լինելով, ծնողք սպասաւորք և ու-
րիշ իրեն շուրջ դարձող չափահաս մարդիկ
անոր համցից համեմատ կը վարուին, որով
յառաջ կու գայ ամենավատ հետեւանքներ:

Եւ երբ ծնողաց սէր երկրորդ և եր-
րորդ զաւակաց վրայ ևս կը տարածուի, ան-
դրանիկն կ'սկսի յայնժամ իւր սովորական
սիրոյ մեծ բաժին պահանջել ծնողքէն, ա-
մեն գգուանք և թոյլտուութիւն իրըև միայն

իւր սեփհականութիւն՝ չուզէր որ միւս եղ-
բարց վրայ ալ տարածուի :

Հետեւաբար այս մախանք, այս պահան-
ջողութիւն օրինակ կը լինի միւս փոքր
եղբարց, որով կ'սկսի մանկական կենաց
մէջ սերմանուիլ դժուարթիւն, դրկանք, ա-
տելութիւն, յուզմունք և խոռովութիւնք :
Մանուկներ այս կերպ վարժելով՝ երբեմն
այնչափ խստաբարոյ, այնչափ անտանելի
կ'ըլլան, որով շատ անդամ ծնողք կ'սկսին
զինաթափի լինիլ, յուսահատիլ, հալիլ և մա-
շիլ . վասն զի այդ մողութիւնք երթալով
այնչափ խոր արմատ կը ձգեն, որ այլ ևս
անհնար կը լինի խլել և մաքրել, և անմեղ
մանկան ապականուած յօժարութիւնք բա-
րեխսառնել :

Պէտք է ասել թէ, երբ անդրանիկ զա-
ւակն աղջիկ լինի, միւս զաւակներ աւելի
հանդարտաբարոյ կ'ըլլան, որով այնչափ
դժուար չէ մեղմել անոնց գէշ ընդունա-
կութիւնք . իսկ երբ անդրանիկն արու է,
երկրորդ զաւակն թէև աղջիկ, բայց գրե-
թէ այս ալ իւր եղբօր չափ խստաբարոյ
կ'ըլլայ . ուստի անդրանիկներ, իբրև բարի
օրինակներ մեծցընելու է :

Զեմ ուզեր շատ մեղադրել ծնողք,
փոքր ինչ գիտեմ թէ սէր անչափ է և կոյր,
երբ ծնողական կրակոտ գորովանքէն յա-

ուաջ կը բղխի . բայց ամեն կիրք և կարողութիւն բարւոյն դործագրութեան համար ստացած ենք , և մանուկներ որ գուցէ մեզմէ աւելի նուրբ կը թափանցեն իրենց մատակարարուած սիրոյ յառաջնորդացութեան , զօրութեան , չափին և դաշտնեաց , այդ կոյր և չափաղանց սիրոյ երեւոյթն է որ շատ անդամ իր գրգռէտ տղան անկարդութիւն ընելու իրաւունք ունենալ և դարձեալ նոյն չափով սէր և դգուանք պահանջել :

Վերջապէս շատ պիտի զղջան այն ծընողք որոնք սէրը՝ հարբենալու չափ կը գործածեն , այնպիսիք , իրենց զաւակաց վուանդաւոր պապագայի կ'առաջնորդեն :

Կարդ մը ծնողք ալ կան , որոնք ոչ թէ ծնողական աղլիք ունին , այլ բոլորովին անզգայ են իրենց որդւոց համար . կը ծնանին միայն , և սիրել երբէք չը գէտեն . այս կարդի մէջն են աղքատ ծնողքներէն և նոյնպէս հարուստներէն մաս մը , որոնք կարծես թէ ակամայ զաւակ կ'ունենան , և ակամայ մեծցընել կը դատապարտուին :

Մարդ քանի զաւակ կ'ունենայ , այնքան մարդ կը համարուի . մէկ զաւակ ունեցող մէկ մարդ է , երեք հատի տէրը երեք մարդ է . ուրեմն երեք անդամ իւր ծնողական պարտականութիւն և կարողութիւն կրկնապատկելու պատճառ կը լինի :

Անաշառ խստութեամբ պէտք էր դատապարտել այն ծնողք , որոնք իրենց համար սոյից համար զաւակ կ'ունենան , և խպառ կը լքանեն զայն , որով ապականութեան սերմեր կը ցանեն ազգին մէջ , և փոխանակ յառաջ տանելու ետ ետ կը մղեն անոր ընթացքը :

Աւելի դիւրին է մանկանց համար բնակարան , կերակուր և հանդերձ ձարել , քան թէ դաստիարակել զանոնք . այն ծնողք որոնք մանուկներ միայն կերակրելով իրենց ամեն պարտք կատարած կը համարին , անոնք երբէք արժանի չեն հայր և մայր կոչուելու . զի կրնային չնիկ մը և կատովիկ մը կերակրել , բայց մարդ պատրաստել ուրիշ գործ էր :

Հայր մը անպատճառ պարտական չէ իւր որդւոց հարստութեան ժառանգութիւն ձըգել . բայց պարտական է դաստիարակութեան ժառանգութիւն թողուլ : Մանուկներ կը մեծնայ՝ արդէն աշխատելու ոյժ ունի , երբ դաստիարակուած է նա , նա այն դրամագլուխ կարող է միշտ շահիլ . բայց երբ զաւակ մը առանց կրթութեան դրամագլխոյն հարստութեան ժառանգութիւն ունի միայն , նա չուտով կ'սպառէ զայն , և այդ ժառանգութիւն իւր մոլութեանց թըշուառութիւններ բազմապատկելու պատճառ կը լինի :

Սեր Հայ ծնողք օրինակ ունենալու են
Հռովմայեցի տիկին կուռնելիան : Օր մը ե-
րեւելի տիկին մը գոհարեղէններով զարդար-
ուած այցելութեան կու գայ կուռնելիային ,
և կ'աղաչէ իրեն , որ ինքն ալ իւր գոհա-
րեղէնքն ցոյց տայ : Կուռնելիան՝ կրթարա-
նէն վերադարձող զաւակներ ցոյց տալով ա-
նոր , կ'ասէ . « Ահա իմ գոհարեղէններս » :

Այս այն Քրակոսեան եղբարց հոչակա-
ւոր մայրն է , որ իւր որդիք երեւելի դաս-
տիարակներու միջոցաւ կրթեց , որոնք այն-
չափ երեւելի եղան :

Այսպէս ծնողք իրենց զաւակաց դաս-
տիարակութեան վրայ պարծենալու են ,
քան թէ իրենց հարստութեան :

Ո՛վ որ ուշադրութիւն չէ ըրած , կը
խնդրեմ որ մասնաւոր դիտողւթիւն ընէ
թէ ի՞նչ են մեր Հայ ընտանեաց խօսակ-
ցութեան առարկան մասնաւորապէս իրենց
որդւոց մասին : Ասոնց մեծ մասին համար
օրուան խնդիր , հանդերձի և կերակրոյ վրայ
է , թողումք այլ և այլ անպէտ առարկաներ
արոնց վրայ կը խօսին երբ առանձին լինին
և կամ իրարու այցելութեան երթան : Խիստ
հաղուագիւտ են այն ծնողք որ դաստիա-
րակական առարկայի վրայ խօսին :

Դ Ա Յ Ե Ա Կ
(Տաղանձէր)

Արդեօք աւելի լաւ չէ՞ր լինիր՝ մանա-
ւանդ Պօլսոյ Հայոց համար՝ մանկանց դըպ-
րոց շինելէն առաջ , դադաներու դպրոց շի-
նէին : Զի դպրոցէն առաջ դադաներու դըպ-
րոց կու տանք մեր տղայք , և մեր ամեն
չէնք ատոնց հիմնադրութեան վրայ կը կա-
ռուցանենք , անոր համար այսչա'փ հաստա-
տուն հիմք կը բռնէ . . . :

Մանաւանդ Պօլսոյ Հայոց մանուկներու
կենաց ուղղութիւն՝ դայեակներու ձեռքն
է . մեր ապագայ չէնքի որմնադիրներ քանի
մը խեղճ ու կրակ տատաներ են : Խնդիր մը
որ դուցէ երբէք մեր խելքէն ու մտքէն
անցնելու արժանի խնդիր մը չէ համար-
ուած :

Ինչ որ տատաներ կը սերմանեն ման-
կանց փափուկ աճեցուն սրտերուն մէջ , մի
և նոյն սերման պտուղներ կը ժողովենք
տղայոց չափահաս վիճակէն :

Ի՞նչ ազգային , մարդկային աշխարհա-
վարի կրթութիւն կարող ենք սպասել այն
ուղրմելի կիներէն , որոնք ապրելու համար
մեր տուներ կը դեգերին :

Թողունք դադաներու բազմատեսակ առ-

մենավատ սովորութիւններ և զարմունք,
առ այժմ քանի մը միջոցներու վրայ խօսինք :

Արդէն ըստինք թէ մանուկն ընդունակ
կը ծնի , և անոր առաջին օրէն կ'սկսի մեր
դաստիարակական պարտուց ուշադրութիւն .
դի սա այն օրէն կը տեսնէ , կը դիտէ և կը
լուէ այս աշխարհը և իր ամեն երեւոյթներ :

Բայց դիտեցք թէ ի՞նչպէս երախայի
ծնած վայրկենին խոռութ մը պառաւներ ծը-
նընդարերի սենեակ խոռած զանազան դա-
տումներ , շողոքորթութիւններ կ'ընեն , և
ահա առաջին դաստիարակ՝ հացկատակ մար-
դարէն ճամփէն կը դառնայ . « Աստուած-
չար աչքէ պահէ , մեր տղան շատ աղջորիկ
է , խելոք է , երանի իր հօր և մօր . տեսէք
թէ ի՞նչպէս ճակատ լսյն , աչքեր մանր է .
մեծ բաղդաւոր մարդ լինելու նշան է » . նոյն
բան կ'ըսէ մեր գանկագէտ պառաւիկ , եթէ
երախայի աչքեր մեծ և ճակատն ցած լինէր :
Ահա քեզ մանկան առաջին աւուր առաջին
դասեր այս եղանակներով կ'սկսի :

Խոկ երբ տղան երկու կամ երեք տարու
եղեր է , հասակ մը որ ամեն բան դիտել
ամեն բան լսել և գիտնալ և խօսիլ կ'ուզէ ,
մեր մեծապատիւ մանկավարժ տատայէ գիրկ
նստած , բերան բաց մտիկ կ'ընէ այն հիա-
նալի պատրութեանց , որուն մէջ սարսա-
փահար պատահմունքներ կան՝ օրինակի հա-

մար , մորթել , գողնալ , յափշտակել , խա-
ւարչտին տեղ , մարդակեր պառաւներ ,
ալապիւճիւկներ , վիշապ , գայլ , գաղան և
այլ շատ մը այս տեսակ անհեթեթ հրէշա-
բանութիւնք , յորմէ մեր պերձախօս տա-
տան առիթ չի փափացներ ընտիր բարոյա-
կաններ հանել մեր փոքրիկ Շաւարչին .
« Տե՛ս , Շաւարչ , եթէ այս գիշերն ալ լսու ;
եթէ տեղդ գործ ընես , այն պառաւ , այն
գայլ կու գայ քեզ կը տանէ » : Եւ արդարն
այս բարոյականը իր անմիջական ներգոր-
ծութիւնն կ'ընէ մեր ընդունակ Շաւարչին
վրայ . այս գիշեր նա աւելի կուլայ , վասն
զի պարագան ու ժայլը կը յիշէ և կ'ահաբեկի .
այսօր աւելի երկիւդէն վրան կ'ապականէ
քան թէ էրէկ : (1)

Ո՛՛ մէկն ասեմ տատաններու և դադա-
նան ծնողաց այս տեսակ վարմունք :

Ամենամեծ պարտք կայ ծնողաց վրայ
տատաններու ամեն շարժումն ու խօսքեր

(1) Որչափ բարեբաղդ կը լինէինք , եթէ տատա-
ներ մի քիչ զարգացած լինելով կամ թէ մանկանց
ծնողք , փախանակ վայր ՚ի վերց հեքեաթներու .
Հայոց պատմութեան զանազան մասեր իբրև հե-
քեաթ մասայներ պատմեն իբրենց զաւակաց : Ես կը
ճանաչեմ մի պատուական ծնողք , որ իւր չոր-
տարեկան ճայոց պատմութիւն սովորեցու-
ցած է մասալի եղանակու :

նկատողութեան առնել և ուղղել զանոնք .
վասն զի ասոնք մանկան բնածիր յատկու-
թիւնն կ'ապականեն և կը ջնջեն և անոր
առողջական վիճակին վրայ ծանր և խոր
ազդեցութիւն կ'ընեն :

Նոյնպէս և կարեւոր էր տղայոց կերակ-
րոյ ժամանակ մեծ ուշադրութիւն ընել, ո-
րովհետեւ, մանուկն այս հասակի մէջ միայն
կերակուրի սեփականութիւն կը ճանչնայ .
եթէ տան մը մէջ զանազան հասակի տղա-
ներ կան, սովորութիւն է միշտ իմ քոյի
գժտութիւն յարուցանել սեղանի վրայ կե-
րակրոյ առթիւ :

Այս հակառակութեան առիթ մատակա-
րարող դարձեալ դարտաներ կամ ծնողքն են :

Պէտք էր նաև օրօրոցի խաղերուն ուշա-
դրութիւն ընել, գոնէ մեր բարեսիրտ տա-
տաներ այսչափ ծառայութիւն կարենային
պէտք եղած կերպով կատարել : Եթէ կ'ըն-
դունինք որ ձայն տղայի առաջին ծանօթ
բարեկամն է և անոր միջոցաւ կը քնանայ,
լաւ ևս չէ՞ր վիներ գեղեցիկ և հրահանգիչ
օրօրի երգերով մանկան քուն հրաւիրել .
անոր գիշերուան խաղաղութիւն զուարթ և
անխոռվ պահել . տղան օրօրանէն կ'սկսի
գեղարուեստի ճաշակ, երգ ու բանաստեղ-
ծութիւնն սիրել: Զէ՞ք դիմեր եղներ ի՞նչ-
պէս ծանր սայլեր աշխուժիւ կը քաշեն սայ-

լորդոյն երդովն, ոչխարներ փող կը սիրեն,
և զինուոր մարդ նուազներու ազդեցու-
թեամբ հարբենալով զինքն կրակի և մահ-
ուան մէջ կը ձգէ :

Տղայոց մոտաց և առողջութեան համար
գեղեցիկ երգեր ամենէն բնական սիտոյք-
ներ են : Արդէն իրենց հասակ երգի և խա-
զի զուարթութեան հասակ է . այնպէս որ
կարելի է մինչև անգամ ասել թէ մարդ
կարող է օրօրոցի մէջէն սկսեալ մանուկն
վրէժինդիր զինուոր շինել, հայրենասէր
մարդ, բանաստեղծ և այլն :

Այլ մեր տղայք, զրոս այնչափ շատ կը
սիրենք, և որոց համար ամեն զոհողութիւն
կ'ընենք, թող կու տանք պատահարներու,
անընդունակ տատաներու ըստ քմաց ուղ-
ղութեան, որոց հրահանգներ մեծաւ մա-
սամբ աւելի ապականող և սպառող են,
քան թէ նորոգող : Այս տեսակ տուներ,
բանտեր են տղայոց համար, այն ազատա-
թոիչ զուարթնոց միտքն և ձեռք ու ոտքը
կը կապուին ծանր շղթայով:

Կարծեմ շատ հաղուագիւտ են այն ծը-
նողք, որ երբ տատայի պէտք ունին, վիճա-
տուեն այնպէս տատայ մը գտնալ, որ գոնէ
ունենայ մաքուր չայերէն, քաղաքավարի
վարմունք, և մանուկն գոնէ իւր առաջ
ամսականին չափ սիրէ :

Եւ սակայն ի՞նչ կ'ուզենք մեր ողորմելի աշխատասէր տատաներէն. միթէ սոքա գերմանական մանկավարժնե՞ր լինելու էին, դաս մը պարկեցա ռամիկ կիներ, որոնք առ հարկի իրենց երախաներ անխնամ ձգելով կու գան աստ մայրութեան խնամք ծախելու մեր փափկասուն այլ լքեալ մանուկներուն :

Դարձեալ մեր այս համեստ տատաներ հազար անգամ լաւ են քան օտարազգի տատաներ, զորս նորութիւն մը կը համարին ընդունիլ ոմանք մեր Հայ ընտանիքներէն : Պօլսէն զատ այս վատ սովորութիւն քանի մը տեղեր ալ կայ, որք Յոյն տատաներ կը գործածէն . և որ ամենէն տիսուր իրողութիւնն է, ոչ միայն մանուկներ իրենց մայրենի լեզուէն առաջ օտար լեզու կ'ուսանին, այլ և ամբողջ ընտանիքն ալ մեր Յոյն տատայի բարոյական ազդեցութեան տակ յունարէն կը խօսին . այնպէս որ եթէ օտարական մը պատահի իրենց տուն, առաջին անգամ կը կարծէ թէ Յոյն ընտանեաց մէջ մոտած է : (1) Ինքնին տեսած եմ երբեմն այն տեսակ

(1) Երկար կը լինի յէւէլ աստ Ռումանիոյ, Ներքին Ռումանաստանի և այլ գաղթականաց մանուկներու վիճակ, որոնք այս մասին կարծեմ թէ աւելի տիսուր երեւոյթներ ունին . . . :

Հայ մանուկներ որ եօթ ութ տարու եղեր են և հայերէն չեն գիտեր, միայն յունարէն կը խօսին . և երբ զարմանօք հարցուցած եմ, « թէ ի՞նչ ցաւալի բան է որ աղայք այս հասակի մէջ մայրենի լեզուն չդիտեն և դուք պարտաւորուած էք յունարէն խօսիլ ձեր տղայոց հետ » , տեսէ՞ք ի՞նչ պատասխան ընդունած եմ:

« Ի՞նչ ընենք, տատան Յոյն լինելով, տղայք անոր ձեռք մեծցան և մեր լեզուն չդիտեն » :

Ահա հայեր և մայրեր, որոնք տատայի չափ ներգործութիւն և հեղինակութիւն չունին իրենց որդւոց վերայ . հայեր և մայրեր, որոնք կարծես թէ տղայոց հաւասար վիճակ կ'ստանան՝ օտար դայեակի մը ձեռքի մէջ . . . : Այսպէս փոխանակ վարձեալ տատան ընտանիքի մը լեզուին վարժելու, ամբողջ ընտանիք մը տատայի մը հետեւելու ամօթ չի համարիր . . . :

Վերջապէս շատ բազմաթիւ են դայեակներու մեր ընտանիքի մէջ բերած զեղծմունքներ, որոնք մի առ մի նկարագրել երկար կը լինի :

Եւ միթէ շատ ծնողքներ այդ դայեակ տատաներէն աղէօկ են . միթէ մանկունք դայեակներու գիրկէն առնելով ծնողաց գիրկ տանք մանկանց դաստիարակութիւն

երաշխաւորեա՞լ կը համարինք : Ընդհակա-
ռակն երբեմն աւելի գէշ կը լինի . գոնէ
տատաներ մասսամբ մը իրենց գիւղական
պարզմութեամբ և քիչ խառն վարուք ա-
ւելի նուազ վնասակար կը լինին , քան այն
ծնողք , որոնց լեզուն ու խօսք , շարժումն
ու կենցաղ , ուտելն ու խմելն խառն և ան-
զգոյշ են . ծնողք ոմանք , երբեմն այնչափ
բթամիտ են , որ իրենց մոքէն անդամ չանց-
նիր թէ փոքրիկ տղայք միթէ կրնա՞ն իրենց
օրինակին հետեւիլ : Ասոնք արդէն իրենց
վարք չեն նկատեր , ո՞ւր մնաց տղայոց
համար պէտք էր առանձին զգուշութիւն
ընէին :

Ո՞րչափ կան այնալէս անդութ անոպայ
ծնողք և մարդիկ , որ երր իրենց ան-
մեղ մանուկն իրենցմէ օրինակած մէկ վատ
խօսք կամ հայկոյանք , մէկ ապականիչ
վարմունք ճշդիւ կը խօսի կամ կը կատարէ ,
ուրախութեան քրքիչներով զայն կը գըգ-
ուեն ու կը սիրեն : Այս տեսակ ապաշնորհ
մարդիկ ընտանեկան ամեն հաղորդակցու-
թենէ կտրել , լեռներու և գաջտերու մէջ
պէտք է բնակեցընել , որ թոյն կը խառնեն
անմեղ մոքերու մէջ , որ անարատ սիրտեր
կ'ապականեն և այսպէս կրակով կը խան-
ձռտեն անմեղ թոչնիկ մանկանց թեւերն
ու թռիչներ . . . :

Հեռո՛ւ , հեռո՛ւ պահեցէք ձեր զաւակ-
ներ ամեն չար և անզգոյշ օրինակներէն ,
ինչպէս թունաւոր օձերէ և խայթոցաւոր
կարիձներէ , հաստատ համոզուելով որ մա-
նուկներ լուսանկարի չափ արագ և միշտ
կ'օրինակեն որ և է շարժում , խօսք , վարք
և երեւոյթ : Եւ երբ միանդամ օրինակե-
ցին , այնուհետև ամիսներով , տարիներով
դժուար և երբեմն անկարելի կ'ըլլայ մոռ-
ցընել տալ զայնս . վասն զի անմշխապէս
այդ գաղափարներ տարածուեր ծաւալեր
է տղայի ջրիկրուն , սրտին և ուղեղին
խորքեր :

Ուշի ուշով դիտեցէք ձեր վարք ձեր մա-
նուկներուն շարժման և խաղերուն մէջ ,
կը տեսնաք թէ ինչպէս ձեր վարուց ման-
րանկարներ կը ներկայացընեն միշտ :

Ճշմարիտ հայր և մայր մը , որք կը ճանչ-
նան իրենց պարտիք , կը ճանչնան երա-
խայի նշանակութիւն , ոէր և անոր գոր-
ծածութեան եղանակն , ինչպէս ուզեն այն-
պէս կրնան մեծցընել իրենց մանուկներ :
Բարի կամ չար , առողջ կամ հիւանդ , ըն-
դունակ կամ անընդունակ , զինուորական
կամ քաղաքագէտ մարդ , վաճառական կամ
արհեստաւոր , գրագէտ կամ անդէտ . ծնո-
ղաց ձեռքն է պատրաստել իրենց զաւակ .
մանուկն ազնիւ խմոր մ'է ծնողաց ձեռք ,

որ ուղած կերպ ու կերպարանքի կը նան
վերածել :

Ուստի ընդ միշտ կրկնելու է այն խօսք
թէ մանկան ներկան և ապագան, թշուա-
ռութիւն կամ երջանկութիւն, կեանքն ու
մահ ծնողաց ձեռքն է :

Աիրելի անմեղ մանուկներ այն փափուկ
ծաղկի բնութիւնն ունին, որ ձեռք տալուն
պէս կը թոշնին, հեռու պահեցէք ամեն
անսուրբ ձեռքեր, որչափ որ ձեզի մերձա-
ւոր լինի այն ձեռք, լաւ է ձեղ որ մէկ
ձեռք պակաս լինի, քան թէ ամբողջ մարմ-
նով կրակի մէջ այրէք :

Հայ ծնողք ոչ միայն իրենց կեանք
թշուառացընելէ խնայելու են, այլ և
խնայելու են այս թշուառ ազգին : Ներիք
այսչափ ժամանակ անսուրբ և թունաւոր
ձեռքերով մերձեցան մանուկ ծաղիկներուն՝
և մեր ապագան այսչափ երկար երկար ժա-
մանակ չոր ու ցամաք պահեցին :

ՄԱՆՈՒԿՆ ԾԱՂԿՈՑԻ ՄԷՋ

Երթանք մանուկ ծաղիկն Ծաղկոցի մէջ
ծաղկած տեսնել :

Ի՞նչ գեղեցիկ անուն մ' ունի ուսումնա-
րաններու այն ստորին յարկ՝ զոր մենք Ծաղ-

կոց կ'անուանենք : Աշխարհիս ամենէն գե-
ղեցիկ, ամենէն թանկագին ծաղիկներու
պարտէզն է այն, ուր որ կը հաւաքուին
շեռավիթիթ մանկակներու երամլ :

Ծնողնք երկու նպատակ ունին իրենց մա-
նուկներ Ծաղկոց տալու . նախ կրթութիւն
և ապա ուսում սովորելու :

Բայց ճշմարիտ խօսելով, մեր Ծաղկոց-
ներ մեր տուներէն, և տուներ Ծաղկոցներ-
էն գէշ, երկուքն ալ իրենց նշանակութե-
նէն հեռու վիճակի մէջ կը գտնուին :

Երբեմն մեր տները Ծաղկոցէն աւելի
հրահանգիչ լինելով, երբեմն ալ Ծաղկոցներ
տներէն աւելի բարեկարգ՝ մեր տուն ծաղ-
կած մանուկներ կ'երթան ծաղկանոց կը
թոռմին . երբեմն Ծաղկոցէն գալով 'իտուն
կը թոռմին :

Եւ մենք ընդ հանուր լոյս, յառաջադի-
մութիւն, միրկութեան նպատակ և ապագա-
յի ուղղութիւն կրյուսանք այս անուղղայ
ճանապարհներով . իսկ երբ մէկը ելնէ փըր-
կութեան ճանապարհ քարոզէ մեզ, սառ-
նասիրու կամակրութեամբ կ'արհամարհենք
զայն և իւր ճանապարհը :

Ծաղկոցի վիճակին վրայ խօսելէն առաջ
երկու խօսք ընենք Վարպետ ուսումներուն
ծաղկոցներուն վրայ :

Մեր Վարպետ տուտուներ՝ Զուիցերիոյ

մանկական պարտէզ մշակող վարժուհինեւ
րու հակառակ դեր կը կատարեն : Ընդ-
հանրապէս աղքատ կամ արհեստաւոր ծը-
նողք, իրենց երկուքէն մինչև չորս տարու
մանուկներ՝ վարպետ տուտուին կը զրկեն,
ոչ թէ զանոնք հրահանգելու համար, այլ
որպէս զի աղջայոց տան մէջ յարուցած ան-
հանգստութենէն խաղաղին : Իսկ ուստիու-
ներուն ուստումնական վիճակ՝ պարզ տա-
տաներու վիճակէն շատ տարբեր չը լինե-
լով, աւելորդ կը լինի կրկնել թէ տղան
վարպետ տուտուի քով այն վիճակն ունի,
ինչ որ ունէր տատային գիրկը : Եւ սակայն
ծնողաց՝ վարպետ տուտուին փոքրիկ տղաք-
ներ յանձնելը, տեսակ մը մանկավարժա-
կան պարտէզի սկզբունքն ընդունել է, յոր-
մէ կարելի է օգուտ քաղել, երբ գերմա-
նական աշխարհը լուսաւորող այդ լցուը մեր
մէջ ընդունելու բաղդն ունենանք օր մը :

Գաղով ծաղկոցներու վիճակին, կար-
ծեմ թէ Պօլսոյ և գրեթէ ամբողջ Հայաս-
տանի երկսեռ ծաղկոցներ իրենց բուն նշա-
նակութենէն հեռու են : Եւ ի՞նչ կերպ
կարող էին լինել, քանի որ դեռ ամբողջ
Տաճկաստանի Հայոց մէջ, և կարծեմ բո-
լոր ազգի մէջ մեր պահանջած մանկավարժք
և վարժուհիք չկան, կամ գէթ այդ գա-
ղափար տարածուած չէ, որ մանկավարժ-

ներ ունենալու պէտք ճանչնային, և զայն
ստանալու միջոցին ձեռնարկէին :

Մեր ունեցած արդի Ծաղկոցներու մէջ
ուր կը յաճախեն երեքն մինչև եօթ տա-
րու մանուկներ, մանկանց ամենէն արգա-
սաւոր և ընդունակ հասակ յումպէտս կը
վատնուի :

Ծաղկոցներ մեր դպրոցներու ամենէն
լքեալ և աննշան սրահն համարուած է :
Կրթութեան հոգ, փոքրիկ հասակաւ տղա-
յոց հետ վարուելու և խօսելու եղանակի
հոգ, ուսուցման ձեւի հոգ, առողջապա-
հական հոգ իսպառ բարձի թողի եղած է :
մեր պատուելի մանկավարժներ իրօք դա-
ժան բանտապահներ են, քան թէ տղայոց
սիրելի ընկեր, քան թէ դաստիարակ հայ-
րեր . որոց ամեն գիտութիւն, իրենց պօ-
ռաւալ կանչելուն, խոժոռ հայեցուածքին,
ծանր ծանր յանդիմանութեան, և վերջա-
պէս գան ու գայտի վրան է : Մանկավարժ
պատուելիներէն այն աւելի յարդի համար-
ուած է, որ աւելի ահեղասաստ է, հոգէ-
առ հրեշտակի պէս, որոնք երբեմն տղայոց
վրայ այնչափ ահ ու սարսափ կ'ազդեն,
որ նոքա երազի մէջ կը յիշեն այդ վարժա-
պէտի ճայն և կանգուն մը վեր կը թոխն :

Ի՞նչ հարկ կայ հեռաւոր օրինակներու .
ոչ մեր հասակակից մարդիկներէն շատեր՝

նոյնակս և մենք՝ որպատիւ ֆալիկա ,
Առնի հարուածներուն արժանի եղած
ենք . . . :

Հինգ տարու էի և դեռ չեմ մոռցեր
մեր այն նշանաւոր մանկավարժի ծեծը , որ
երեք հարիւր տղայք մէկէն կը պառկեցը-
նէր և երբեմն այնչափ կը զարնէր պլիկալ
ոտքերու տակ , որ արիւն կու գար ոտքե-
րէն : Եւ կ'ըսէր . « Գերեզմանիս վրայ բռւ-
սած խոտերէն անդամ վախնալու էք » :
Եւ սակայն այս պատուելի վարժապետն
մոլար ժողովրդեան աչքին չնաշխարհիկ
գիտնական և յարդի մարդ էր , վասն զի
տղայք կը սոսկային իրմէն :

Բաւական տարիներ անցեր են մեր յի-
շած դպրոցական կեանքին վրայ , բայց
դեռ զգալի տարբերութիւն մը չենք տես-
ներ այսօր . Եթէ փայտը մայրաքաղաքէս և
ուրիշ քանի մը քաղաքներէն վերցուած է ,
բայց մանկավարժներ գրեթէ մի և նոյն են :

Առանց ձմարտութիւն խեղաթիւրելու
ասացէք խնդրեմ , տեսե՞ր էք ֆաղկոցներու
մէջ տղայ մը որ մանկավարժ պատուելին
սիրէ սրտանց : Եթէ սիրէին դոնէ , պէտք
էր ըսել թէ կ'երեւի որ մանկավարժը իւր
առած ամսականին չափ կը սիրէ անմեղ
մանկան :

Բայց զիրենք տղայներուն սիրել տալու

համար , նախ իրենք մանուկներ սիրելու եռ-
զանակն գիտնալու էին . և այս բան գիտը
նալու համար , տղայոց հոգին , կամք և յօ-
ժարութիւններ գիտնալ պէտք էր , և զայս
գիտնալու համար՝ նախ շատ բաներ գիտ-
նալու էին :

Որի՞ տղան առաւօտ կ'ելէ և սիրով ֆաղ-
կոց կը վազէ . ո՞չ շատեր դժուարութեամբ
կ'երթան մինչև անգամ ծեծով ու լացով :

Աստուած կարողութիւն տայ մեր տըն-
տես եղբօր , և պատուելի գաւաղան և ապ-
տակն ողջ մնայ , տղան շուտով դպրոց կը
վազէ և կամ տնտեսի շալակը կ'ելնէ :

Ահա այս վիճակով մենք չայերս յառաջ
կ'երթանք դէս ՚ի յաւիտենական յետաղի-
մութիւն . . . :

Այսպէս մեր ֆաղկոցներ ոչ թէ ծաղկոց
այլ կատարելապէս վշոցներ են . Երբեմն
կոս կը սորվին մանուկներ ինչ որ պակաս մը-
նացած էր տատաներէն ու անհրահանդ
ծնողքներէն :

Որովհետև ամեն կարգի և վիճակի մար-
դոց մանուկներ կան այդ ողորմելի սրակն
մէջ , ուրեմն կատարելապէս խառնուրդ մ'է
ամեն տեսակ վարուց և սովորութեանց :
Իսկ մեր յցս միայն պատուելի մանկա-
վարժին վրայ է , որ նա իւրաքանչիւր ման-
կան դէշ վարժութիւնք մոռ ցընել տալով ,

ամենքն ալ կրթութեան միօրինակ վարուց վերածէ , կրթութեան բովին մէջ հայէ ու մաքրէ և մաքուր և բարի Հայ մարդ պատրաստէ ազգին համար :

Այլ երբ կը տեսնեմ ծաղկոցի մէջ պատուելին իւր ամեն պարտականութիւն գաւաղանով կատարել կ'աշխատի , աչքերս արտասուօք կը լեցուի և կ'ըսեմ ինքնին , « Անմի՛տ պարտիզպան , դալար տունկեր ու ծաղիկներ գաւաղանի հարուածներով կը խնամէ . . . :

Իսկ ուսուցման եղանակն այս է . մինչեւ որ մանուկն չոր ու ցամաք քերական և իրեն ըմբռնումէն վեր ընթերցարան կ'աւարտէ , հոգին բերան կը հասնի , Ծաղկոցի շեմք , դրասեղանի տախտակներ , իւր կուրծքի դալար ոսկորներ , իր մատաղ միտքն ու սիրտ միանգամայն կը հալի ու կը մաշի :

Ուստի մանուկն դպրոց կը մտնէ , որպէս թէ գերեզման կը մտնէ . դասատուի երես կը նայի , որպէս թէ մահուան դէմք կը նայի . Թուղթ և գրիչ ձեռք կ'առնէ , որպէս թէ օձ կարիճ կը չօշափի . . . այս վիճակին մէջ անմեղ զոհին՝ մանկան վրայ ո՛չ սէր և ո՛չ խանդ կը մնայ , ամեն բան ակամայ կ'ընէ :

Վերջապէս մեր ծաղկոցներու ամեն ուղղութիւն մանկանց համար անբնական և վընասակար են . չորս տարու մանկան համար

ոչ քերական , ոչ գրասեղան , ոչ անշարժ նստել բնական չէ , մեռցընել է տղան :

Գոնէ ազգային կրթական խորհուրդ այսափ ծառայութիւն ընէր ազգին , գերմանիոյ Տղայոց դարտիչն ուղղութիւններ ուսումնասիրել տար և որով գէթ մեր ծաղկոցներ փոքր ինչ բարեկարգեր :

Այրդ քանի որ մեր ծաղկոցներու վիճակըն այս է , ուրեմն ինչ մեղք ունին այն քանի մը բարեկիրթ հարուստ ընտանիքներ որ իրենց տղայք , առանձին տան մէջ , իրենց անմիջական հսկողութեան տակ կը դաստիարակեն :

Այս մարդիկ ինչպէս կ'երեւին , նախ Ծաղկոցներու փորձն առած են , և վերջ այս անարդար միջոցին դիմած ըլլալու են : Կը ճանչնամ Պերճ ու Անուշաւան երկու փոքր տղաներ , որ երեք տարի է իրենց տան մէջ կը դաստիարակուին , բայց այսչափ ժամանակի մէջ ծաղկոցէն ստացած մի քանի գէշ վարժութիւններ գեռ չի կրցին մոռնալ : Ա՛վ իւր մանուկն կ'ուզէ կամաւ դատապարտել այդ տատասկարեր ծաղկոցին մէջ :

Եւ սակայն անարդար է ըսի՝ ձեռնահաս ընտանեաց այս առանձին դաստիարակութեան միջոց , վասն զի այս կերպով աշքատ մանուկներ կը զրկուին հարուստաներու ձեռնուութենէն և հսկողութենէն , որով լքեալ

վարժարանն իսպառ կը խափանի , և օր մը
բարեկարգուելու յայս չունենար : Երկրորդ
որչափ անհատապէս օգտակար և իրաւա-
ցի լինի հարուստներուն իրենց տղայոց
առանձին դաստիարակութեան հոգը , բայց
շատ անբնական է տան մէջ առանձին տը-
ղաներ դաստիարակել . վասն զի մանուկ-
ներ միշտ մանկանց ընկերութիւն կ'ուզեն ,
և այնպէս կարող են զարգանալ : Այս ըն-
կերութիւն ոչ միայն իւր բարոյական օ-
գուտն ունի , այլ և զայս կը պահանջէ ա-
ռողջարանական օրէնք :

Տան մանուկը ոչ մէկ բանով գոհ չըլ-
լար . փափկակեաց , երկչոտ , արհամար-
հոտ , առանձնակեաց վայրենի կը դառնայ :

Աերջապէս այն ասիական պալատական
տղային կը նմանի , որ վանդակափակ դաս-
տիարակութեամբ զարգանալով , օր մը իր
դաստիարակին կը հարցընէր . « Մեր պա-
լատէն դուրս տղայ կայ ինծի պէս , անոնք
ընկեր ունին թէ ինծի պէս մինակ են » :

Ի՞նչ ընելու . է ուրեմն . ազգի փրկու-
թիւն՝ միօրինակ և ընդհանուր դաստիարա-
կութիւն կը պահանջէ . մեր դպրոցնէր այդ
պայմաններէն հեռի են . մեր հարուստներ
կամ իրենց տուն քաջուած՝ ժողովրդեան
մանուկներու խնամատարութենէն ձեռն-
թափ եղած՝ միայն զիրենք կը մասածեն ,

մեր հասարակ ժողովուրդ միայն զոհողու-
թիւններ կ'ընէ իւր զաւակ դաստիարակե-
լու , սակայն 'ի զուր կը վատնէ իր քրտինք ,
զայն դործածող արդիւնաւորող առաջնորդ
չունենալով :

Փէտք է խոստովանիլ թէ այս ազգի մէջ
ոյժ կայ . բայց այդ ոյժ դործածող չկայ :
Ամեն չայ ծնողք շատ կամ քիչ հասկըցած
են կրթութեան և լուսաւորութեան օգուտն
և շատեր իրենց պատառի կէս կը նուիրեն
իրենց որդւոց յառաջադիմութեան համար :
Ուրեմն մէկ բան կը պակսի այս ազգի համար ,
չէնքով չնորհքով քանի մը մանկավարժական
գիտութիւն ստացող վարժապետներ և վար-
ժուհիներ ունենալ , և ժողովրդեան ամեն
կարգի տղայք անխորի այդ մանկավարժ-
ներու հակողութեան յանձնել , որ մեր մա-
նուկներու սկզբնական պատրաստութիւնն
հիմնաւոր լինի : Ահա այս հիման վրայ միայն
կարելի է մեր որ և է չէնքեր բարձրացընել :

Այլ թէ ի՞նչ է մեր քարոզած մանկա-
վարժական գիտութիւնն . երբ քանի մը
վարժապետներ ունենամք , ա-
նոնք պիտի անմիջապէս դործնական ապա-
ցոյցներով համոզեն մել այդ գիտութեան
օգուտներ . և սակայն դարձեալ ըսենք թէ
չայ ազգ , դեռ ո՛չ մանկավարժ մը ունի և
ո՛չ վարժուհի մը . . . :

ՄԱՆՈՒԿԻՆ ՄԱՐԴ

Ահա մեր նկարագրած ծնողաց երախան՝
տատաներու մանուկին, Ծաղկոցի տղան,
ուսումնարանի երիտասարդն մարդ եղեր
աշխարհ մտեր է, տեսնանք թէ ի՞նչ դե-
րեր կը խաղայ այս ընդարձակ ասպարէզին
մէջ :

Չեմ ուզեր ազգային ուսումնարաննե-
րու վրայ ևս խօսիլ, որոց վիճակին վրայ շատ
անդամ խօսուած է. բաւական է ըսել թէ
այս Ծաղկոցներու սրահէն է մեր մանուկ-
ներ վեր՝ ուսումնասրահն կ'ելնեն :

Աւելի կարեւոր է համառօտ տեսութիւն
մըն ալ ազգային ընկերութեան վրայ ընել,
մեր դպրոցէն ելած մարդոց աշխարհի մէջ
ունեցած վիճակին յայտնել :

Մեր դպրոցէն ելնող երիտասարդ մար-
դիկ դեռ այն վերանորոգութիւն չկրցին
տալ ազգային ընտանեկան կեանքին ինչպէս
որ կը յուսայինք. անոր համար և ազգային
հիւանդ կեանքն ալ փոփօխութիւն մը չկրեց
ցարդ, մեր ակնկալած կենդանութեան նը-
շաններ ցոյց ըստուաւ :

Ընտանեկան և ազգային շրջանի մէջ իր
պարտիք ճշդութեամբ չի կատարող մարդ՝
աշխարհի ընկերութեան ցըժանի մէջն ալ յե-

տին տեղ կը բռնէ, և միթէ իրաւունք է ան-
կատար մարդէն կատարեալ գործ սպասել:
Թերեւս ոմանց համար խիստ երեխ խօսքերս ·
արդարեւ ճշմարտութիւն լսել ծանր կուգայ
մարդոց :

Զայս ասելով միանդամայն կ'ընդունիմ
որ մեր ներկայ վիճակն աւելի բարոքած է,
բայց մեր իրաւացի տրտունչն այն է որ մեր
կարողութեան և ժամանակի պահանջման
համեմատ չենք շարժիր, և այս ամեն յե-
տամնացութեան պատճառ ուսումնարաններ
կը կարծենք. չենք դիանո թէ ի՞նչ է նոյն
գաղտնիք, որ մեր ամեն աշխատութիւն և
զոհողութիւնն ՚ի դերէ կը հանէ :

Այն թագուն պատճառն ըսի և դար-
ձեալ ըսեմ, հօր և մօր իրենց երախաններու
վիճակին անտարրեր և անդէտ լինելն է. ։
պատճառ՝ մեր վշոց դարձած Ծաղկոցներն
են. աւաղի վրայ կը կմնենք մեր այնչափ շատ
զոհողութեամբ չենքեր, և կը սրտնեղինք, կը
տրտնջանք և կը յուսահատինք թէ ինչո՞ւ մեր
չենք կանգուն չի մնար և ամեն հողմերէ կը
տատանի և կը տապալի :

Ծնողք եթէ չեն հասկընար իրենց ծնած
տղայոց պիտոյքն՝ վիճակ և վախճանը, գոնէ
իրենց վիճակ և վախճան բաց աչքով տես-
նան :

Աշխարհիս մէջ Հայոց վիճակն ցարդ ան-

Հաստատ և երերուն է , չորցած տերեւի մը
պէս ամեն հովերէ կը թռի , զի իւր ծառի
ոստին բաժնուուլ տերեւը , բնական է կը չոր-
նայ և հովերու թռուցիկ , խաղալիք կը դառ-
նայ . ահա մեր ազգային կեանք , մեր երեկ-
ուան , այս աւուր և վաղուան տիսուր փե-
ճակ . քանի որ մեր հայրեր և մայրեր իրենց
զաւակաց տէր չեն , Հայն ալ ինքն իր տէր
չի պիտի լինի , ոյլ միշտ օտարին ստրուկ ,
անոր կամաց և հաճոյից խաղալիք :

Ի՞նչ է պատճառ որ երթալով աւելի
կ'աղքատանանք քան թէ կը հարստանանք .
որովհետեւ նոյայ տարուան արհեստներու առաջ-
պէտ կը դառնան այն արհեստներու առաջ
որլուսաւորութեան առանձին ուղղութեամբ
յառաջ եկած են . և ի՞նչպէս կրնային հաշ-
տուիլ մեզ հետ երբ մենք նոյն դաստիա-
րակութեամբ մեծնալու օրէնքին հետ ան-
հաշու ենք , և մեր տիսմարութեամբ աշխարհիս
հիացումն գրաւող ճարտարութեանց հետ
կ'ուղենք մրցիլ : Եւ շատ անգամ յամառ
նախապաշարումներով խուլ կը դառնանք
այն ճշմարտութեան և լուսոյ քարոզինե-
րուն , որ երբեմն մեր և այլոց վիճակ ցոյց
կու տան մեզ :

Խոկ մեր ազգային բարոյական վիճակն
ամենէն տիսուր պատկերներ ունի . և երբ
ազգի մը բարոյական կեանք մեռած է , նա ոչ

ազատութեամբ կրնայ շարժիլ , ո՛չ պատիւ ,
ո՛չ վարկ , ո՛չ վատահութիւն կրնայ ստա-
նալ աշխարհէն :

Եթէ դժուար է Հայ ընտանիքներու մէջ
մտնել , վաճառանոց ելէք և իսկոյն զգալի
կերպով կը տեսնաք մեր ազգային բա-
րոյական վիճակի տիսուր նշաններ . կը տես-
նաք թէ մարդիկ ի՞նչ գծուծ և անարդ մի-
ջոցներով իրենց ապրուստ ճարելու հետա-
մուտ են . տեսէք մեր տատաներու ձեռքով
և Ծաղկոցներու միջոցաւ մարդ եղած մա-
նուկներ , ինչպէս իրենց մանկութեան ժա-
մանակի սովորած խաղեր ճշդութեամբ կը
խաղան ընկերական հրապարակին մէջ , և
փոխանակ յառաջ երթալու ետ ետ կը
դառնան :

Բարոյապէս և նիւթապէս անկեալ ժո-
ղովրդեան առողջական վիճակն ալ անկեալ
կը մինի : Լաւ ուշադրութիւն ընելու է այս
ճշմարտութեան . դաստիարակութեան ան-
հոգ հօր և մօր տղան , Ծաղկոցներու մէջ
անառակութեանց վարժած տղան , երբ կը
մեծնայ չափահաս մարդ կ'ըլլայ , հիւանդ
մարդ կ'ըլլայ . և հիւանդ մարդը միշտ ան-
կարող և անյաջող կ'ըլլայ իւր ամեն ձեռ-
նարկութեանց մէջ :

Եւ երբ ազգի մը հոգին և մարմին մի-
անգամայն հիւանդ է , նա աւելի մահուան

մօտ է քան թէ կենաց, նորոգ ութեան և
փրկութեան :

Մեր կենդանութիւն այսօր վաղ և ընդ
միշտ հայրերու և մայրերու ձեռքն է. երբ
նոքա ուչագրութիւն դարձընեն իրենց ծը-
նած երախայի առաջին օրէն մինչև Շաղ-
կոց և Շաղկոցին մինչև ուսմանց աւարտ,
եթէ իրենց երախաններ լաւ դաստիարակ-
ներու յանձնեն, շատ չի տեւեր, շուտով
մեր սերունդն, մեր ընտանիքն, մեր ազգ
վերանորոգութիւն կ'ստանայ :

Հայ ազգի մանկանց թագաւորութիւն
փութացընելու համար, առանց ժամանակ
կորսրնցընելու ամեն Հայ մարդ ուխտ ընե-
լու է գոնէ իւր այս աւուր փոքրիկ մա-
նուկներ՝ ազգին համար ճշմարիտ հայրեր
և մայրեր պատրաստելու ուղղութեամբ մեծո-
ցընել և այդ միջոցն ձեռք բերելու հա-
մար ամեն զոհողութիւն յանձն առնել :
Զոհողութիւն ասելով չկարծուի թէ ար-
տաքայ կարգի ծախուց դուռ բանալ է,
ո՞չ. այն ծախքեր որ կ'ընէք այսօր՝ այն
բաւական է մեզի նոր սերունդ մը պատ-
րաստել. միայն խնդիր այդ զոհողութիւն
արդիւնաւոր միջոցաւ գործածելու վրան է:

Երբ միանգամ իրենց բնական պարտք
ճանաչող հայրեր ու մայրեր ունեցանք՝ ալ
տարակոյս չի մնար որ ազգն ալ յուսացած

ազատութեան տէր կ'ըլլայ, և Հայոց մա-
նուկներու արքայութիւնն սկսելով, մեր
փրկութեան երջանիկ օրը կ'սկսի :

Ահա այն օրերն են որ այս ազգ պիտի
փրկեն, այն օրերն են որ մեր հայրենի
աշխարհ պիտի փրկեն իւր ամեն ապակա-
նութենէն, և Հայ մարդկութիւնն նորո-
գեալ՝ անմեղութիւն, բարութիւն, լցու,
ազատութիւն, կեանք և երջանկութիւն
պիտի ժառանգէ . և անցած կ'ըլլան այն
մայրեր և հայրեր, որք մոլորութիւն և
թշուառութիւն կը ծնանէին մեզ համար :

Միշտ յուսով կ'սպասենք այս փրկու-
թեան օրերուն :

ՔԱՂՈՒԱԾ Ք

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒԻ ԿԵԱՆՔԻՆ

ԼԱԿՈՆ ՄԱՆՈՒԿ

Լացը մանկան խօսք, երգ ու զբաղ-
մունքն է. պէտք չէ երբէք սրտնեղիլ մա-
նուկներու լացէն. ծնողաց համար ամենէն
կարեւոր բան երկայնմտութիւնն է. ան-
համբեր մարդ լաւ է որ երբէք երախայի
երես չի տեսնէ : Պէտք է նաև ուշագրու-
թիւն ընել մանկան լացի պատճառներուն.

հասկլնաւ թէ ի՞նչ կ'ուզէ իր այս լացի
բարբառովն , Եթէ կը տեսնէք որ 'ի զուր
տեղ կու լայ , անհամբեր մի՛ լինիք , թող
տուէք որ լայ . թէ որ քիչ մը խօսք հասկլնաւ
հասակի մէջն է , թեթև մը յանդիմանելու
կամ ուշադրութիւնն նոր առարկայի մը դարձունելու է , և կամ խօսելու
չէ հետը . և մանուկն որ առանց պատճառի
կու լար , ինքնին կը դադրի . բայց միշտ
զգուշանալու է որ չինի թէ մանկիկ հիւ-
անդութիւն մը կամ ցաւ մը ունի որ չի
կրնար բացատրել , և լացով կ'ուզէ հասկըցնել : Մանկան ցաւոց լաց , լուսնակի
պէս բան պահանջնելու լացն տարբերե-
լու է :

ԿԱՄՈՒԿՈՐ ՄԱՆՈՒԿ

Մանկան կամակորութիւն որ երբեմն
սաստիկ սրտնեցլութիւն կը պատճառէ ծնո-
ղաց և ամենուն , իրենց ամեն կամք և պա-
հանջումներ կատարելու վարժութենէն յա-
ռաջ կու գայ : Երբ միանդամ սովորի մա-
նուկն ծնողաց կամաց հակառակ ուզած
բան կատարել տալու , այնուհետև միշտ
անկարելին կը պահանջէ . և եթէ չի տրուի
մեծ շփոթ և աղաղակ կը յարուցանէ տան
մէջ . Երկու դարման կայ այս յամառ տը-

զայոց . եթէ նա երկու տարեկանէն վեր
է , փոխանակ պնդելու ուզած բանին չի
տրուելուն , անմիջապէս ուշադրութիւն
տարբեր առարկայի վրայ դարձունելու է :
Օրինակի համար , « Դու տեսա՞ր Վահրամ ,
Ճնճուկը թռաւ . երկու թեւ ունէր . կըր-
նա՞ս ըսել թէ ի՞նչպէս իր թեւեր բացաւ
ու թռաւ » : կամ թէ , « Տեսէք , մեր Վահ-
րամ հինգ մատ ունի , մատքերու վրայ եղունգ
կայ » ըսելով , մատներ կը համրես և նա իս-
կոյն կը մոռնայ իր պահանջն ու լաց . եթէ
այս միջոցաւ չի յաջողի , մեղմիկ յանդիմա-
նեցով զինքն , և 'ի պատիժ՝ անկիւն մը
դնելու է որ կենայ . և ըսելու է իրեն թէ
« Մինչև որ չըես , չզջաս և ներողութիւն
չի խնդրես , հոն պիտի կենաս » : Մէկ ու
կէս տարու տղայք տեսեր եմ , որ այսպէս
սքանչելի եղանակաւ վարժած էին այս
դրութեան , որք յանցանք գործած ժամա-
նակ՝ փոքրիկ ակնարկութեամբ մը 'ի պա-
տիժ անկիւն կ'երթային և հոն կը կե-
նային մինչև որ զղային , և շուտով ներո-
ղութիւն խնդրել կու գային :

Այսօրինակ թեթև պատիժներուն համ-
բերելու են ծնողք , որ կարենան հանդիսա-
կաց ուտել , հիւր ընդունիլ , և իրենց տնա-
կան գործերովն զրացիլ :

Աններելի է ծնողաց համար , երբ մա-

նուկն կը յանդիմանուի կամ կը պատժուի
մօրմէն , հայրը պաշտպանէ զայն . այս ան-
արդար միջոց տղային անիրաւութեան և
ատելութեան գաղափար սնուցանել կու
տայ զինքն պատժողի մասին , ասով մա-
նուկն խտրութիւն կը դնէ ծնողաց մէջ ,
և միանգամայն իր ըրածներ ամենքն ալ
իրաւունք կը համարէ , որով աւելի խստա-
պահանջ և կամակոր կը դառնայ :

Ուստի ծնողք մանուկներու պատժոյն և
յանդիմանութեան մէջ համաձայն ըլլալու
են :

ԸՆԴՈՐԻՆԱԿՈՂ ՄԱՆՈՒԿ

Անուշաւան վեց տարու է և տան մէջ
անդրանիկն է . քոյր մը ունի Աշխէն չորս
տարու , և եղբայր մը Վահագն երկու տա-
րեկան : Սեղանի վրայ Անուշաւան պահան-
ջող և սպառնալից կերպով իրեն չտրուելիք
այս ինչ բանը կ'ուզէ . հայրը վարժուած է
անդրանիկան քմաց համաձայն վարուիլ ,
եթէ ոչ Անուշաւան կ'սկսի պոռալ կանչել ,
և եթէ քիչ մը յանդիմանուի , աւելի կը
բորբոքի և սեղանէն զայրանալով վեր կ'եւ-
նէ , և կը քաշուի մէկ կողմ մը կու լայ .
սեղանի վրայ եղողներ ամենք կը խոսովին :

Եւ որովհետու այս վիճակին մէջ Անուշաւան կ'սպասէ որ թախանձեն վինքն թէ

իւր կամբ կատարուած է , և իրօք կը թա-
խանձեն ալ . այնուհետև աւելի ծանր կը
ժախէ զինքն , որպէս զի արդիողին և անոր
շուրջ գտնուող անձանց վրայ կամակատա-
րութեան յաղթանակ մը ձեռք բերել և
ցուցընել յաջողի : Այս միջոցին մէջ Աշխէն՝
որ նոյն վարկեան խաղաղ էր , նա ալ մեծ
եղբօր հետեւիլկ' ախսորժի , երբ կը դիտէ որ
անոր շատ թախանձանքներ կ'ըլլան և թա-
խանձանքներ՝ կամակատարութեան զիջում-
ներ են , հետեւապէս ծնողաց սիրոյ առա-
ւելութեան նշան . կը նախանձի այդ ան-
ախսանձելի վարմանց և իր մեծ եղբօր դը-
րութեան կը հետեւի . նոյնը կ'ընէ և փոք-
րիկն վահագն , որ հազիւ երկու տարու
կայ : Տնայոց այս ընթացքն ալ սիրոյ ան-
չափաւոր գործածութեան հետեւանքն է :

Անդրանիկն Անուշաւան կը դիմէ որ Աշ-
խէնի հասակին եղած ժամանակ աւելի
թոյլտուութեամբ կը վարուէին իրեն հետ,
նոյնը և այսօր ձեռք բերել կ'աշխատի :
Նոյնպէս և Աշէն կը տեսնէ որ փոքրա-
գոյն վահագնի գգուանք ամենէն չառ է,
և կը յիշէ թէ քիչ մը առաջ այդ գգուանքն
ամբողջ իրեն միայն կը վերաբերէր, այս ալ
կը պահանջէ, որ նոյն առաջին գգուանաց
թոյլտուութեամբ վարուէին իր հետ, եթէ ոչ
հազար ու մէկ շփոթներով տունը կը լեցընէ :

ՇՓԱՅԱԾ ՄԱՆՈՒԿ

Որչափ շատ գդուես մանուկն, այնչափ
շատ յանցանք դործելու պատճառ կու տաս
անոր. գդուանքն ու սէր պէտք է չափա-
ւորել:

Անկարդ սիրոյ վարժող մանուկներ տան
մրրիկն կը դառնան, գժտութեան և խռո-
վութեան պատճառ :

Շփացած կը մեծնան մասնաւորապէս
հարուստներու մանուկներ, միամօր զա-
ւակներ և անդրանիկներ : Ո՞րչափ երիտա-
սարդ մարդիկ կան, որ իրենց մանկութեան
ստացած անկարդ սիրոյ պատճառաւ երես
էլած անխրատ և կամակոր և արհամարհուտ
և ապերասան բնաւորութիւն կ'ունենան .
Հայրենի տմեն ժառանգութիւն կը փնտացը-
նեն և իրենց անընտել բնաւորութեամբ
ամենուն ատելի կ'ըլլան: Ոճիր մ'է այս զոր
կը գործեն իրենց պարտուց անդէտ՝ սիրով
արբեալ ծնողք, զի այս միջոցով իրենց
զաւակներ թշուառութեան զոհ կը պատօ-
րաստեն :

Ճշմարիտ սէր՝ արտաքին ձեւերու պէտք
չունի. սրտի մէջ սիրելու է տղան քան թէ
լեզուով : Ճշմարիտ սէր՝ մանուկները գտաս-
տիարակել է . ո'վ որ իւր զաւակ լաւ կը

դաստիարակէ, նա շատ աւելի կը սիրէ զայն:
Չմոռնանք ասել նաև թէ շատ վնասակար
հետեւութիւն կ'ունենայ, աղայի երեսին
զինքն գովել որ և է գովելի գործոց հա-
մար . պարզ հաճութիւններով քաջալերե-
լու է զինքն :

ԵՐԿՉՈՏ ՄԱՆՈՒԿ

Տղայոց լաց կտրելու և կամ պահան-
ջումներ մոռցընել տալու համար գրեթէ
սովորութիւն եղած է զանազան ահարեկիչ
ձայներով կամ մոտացածին հրէշներու սպառ-
նալիքներով վախցընել անմեղ մանուկներ .
այս ո'չ միայն վախցընել, այլ մանուկն
մեռցընել է : Թողումք բազմաթիւ զոհեր,
որ այս տեսակ երկիւղներու պատճառաւ
եղած է, այդ երկիւղի նախապաշարումն
երթալով այնչափ սոսկալի կերպով կը ծան-
րանայ մանկան անարատ և ազատ երեւա-
կայութեան վրայ, որ իսպառ կ'ընկճէ և
կը ճմիէ զայն : Եւ ողորմելի հրեշտակիկն ոչ
միայն այս ու այն շարժումէն, կրիէն,
ձայնէն, տեղէն, այս ու այն կենդանիէն
ու մարդէն կը վախնայ, այլ և այդ վախով
կը մեծնայ և իւր ամեն ձեռնարկութեանց
մէջ արիութիւն չէ կարող ունենալ :

Կթէ քիչ մը աւելի աշխատէինք սերտել

մեր տղայոց հոգեկան վիճակ և բնութիւն ;
երբէք երկիւղի սպառնալեաց պէտք չէր
մնար . կրնայինք այնուհետև անոր լեզուով
զինքն համոզել . բայց մենք մանուկներու
լեզուէն չենք հասկընար , վասն դի մեղի
մասնաւոր խնդիր շինած չենք զայն :

Ծնողք մանուկներու շարժում և մի-
տումներէն նախ դաս առնելով կրնան զա-
նոնք դաստիարակել :

ՀԻՒԱՆԴ ՄԱՆՈՒԿ

Կայ արդեօք աւելի ոգեսպառ և սըր-
տամմիլի վիճակ մը քան մանուկներու ան-
կողնիկ . այն նիկար փոքրիկ հրեշտակիկ որ
պառկեր կը տքայ , հիւանդ է , բայց չգի-
տեր թէ իրեն ի՞նչ եղեր է . նա հովին վզիկ
ծուած շուշանի կը նմանի , զգուչութեամբ
հպինք իրեն , որ վար չիյնայ : Ծնողաց ա-
ռաջին պարտականութիւն մանկան առող-
ջապահական վիճակին վրայ հսկել է : Երբ
մանկիկ կը հիւանդանայ , անոր աղէխարչ
ծնողք արդէն կենդանւոյն մահուան կը
մերձենան , և շատերն իրենց շափազանց
սիրոյ պատճառաւ , անոր տկարութիւնն
կրկնապատկելու պատճառ կ'ըլլան :

Ինծի համար ամենէն անբնական բան
մանկանց տկարանալն է . բնութիւն գէթ-

այս առանձնաշնորհութիւնն ընելու էր ման-
կանց . ասոնք հիւանդանալու չէին :

Մանկիկն երբ կը տկարանայ և իւր տկա-
րութեան տեսակ յայտնի կ'ըլլայ , շատ
պարզ վարմունքով անոր ուր տեղ ցաւկին
հասկընալու են , առանց երբէք այլայելու ,
այնպէս որ մանուկն չգդայ թէ հիւանդու-
թիւնը վախնալու կամ վտանգաւոր բան է .
Ընդհակառակն՝ այնպէս զուարթագին և
անտարբեր վարուելու է հիւանդին հետ ,
որպէս երէկ և յեռանդն , որով տղայի ցա-
ւեր կը թեթեւնան , և աւելի արիասիրտ ,
տոկուն և շարքաշ կ'ըլլայ :

Շատ ծնողք , իրենց տղայոց տկա-
րութեան ժամանակ անտանելի սրտադող
մը կ'ունենան . հով թէ փչէ և մանկան
մազեր շարժէ , կը վախնան թէ բան մը ե-
ղաւ արդեօք . որով շատ տղայք այս կեր-
պով մեծնալով կեանքը իրենց համար կաս-
կած և զարհուրանք կը դառնայ :

ՓԱՓԿԱՍՈՒԻԿ ՄԱՆՈՒԿ

Տղայք որչափ փափուկ պահուին , այն-
չափ շատ տկար կ'ըլլան . տղայոց համար
անբնական է զգուշացընել ամեն հովն ,
արեւէն , ցրտէն ու տաքէն . արեւն ու հով ,
ցուրտն ու տաք իրենց բնական պաշտօնն

ունին մեր մարմինն կազդուրելու : չափա-
զանցութիւններն են որ զմարդ կը վնասեն :
Փափկակեցութիւն ոչ միայն հիւանդութեան
դռներ կը բանայ , այլ և թոյլ և մեղկ կը
պահէ բարոյական վիճակով : Երբեմն ա-
մառ և ձմեռ այնչափ շատ կը հագցնեն
տղայոց , որ թռչտող մանկուոյն ձեռք ոտք
կը կապուի , դիւրութեամբ չէ կարող շար-
ժիլ և այդ ծանր բեռան տակ կընկճի և
կը տագնապի : Այս չափազանց զգուշութեան
պատճառներէն մինն ալ ընտանեաց մէջ պա-
տասխանատուութեան խստապահանջութիւ-
նըն է . օրինակի համար , տղայի մայր , հօրմէ
կ'զգուշանայ , մեծ մայր , մօրմէն , տատան
ամենէն , որով ամենքն ալ առանձին կ'աշ-
խատին փափկակեցութեան մէջ պահպանել
տղան , զբով հիւանդացնել զայն : Ար-
դարև ամեն ոք հսկելու է մանկան . բայց
իւրաքանչիւրի սիրոյն վստահանալու է : Թէ
և չարքաշ տղայք աւելի առողջ , զօրաւոր
և ընդունակ կ'ըլլան , բայց փափուկ մեծ-
ցած տղան մէկէն չարքաշութիւն վարժեցնե-
լու ջանալն ալ ուրիշ ծայրայեղութիւն մ' է :

Թէ ի նշպէս չարքաշ մանուկներ առողջ
և զօրաւոր կ'ըլլան , ահա Սպարտացւոց մա-
նուկներ մեզ օրինակ են . Վիդուրկոսի օ-
րէնքով Սպարտացի տղայք կօշիկ չէին հագ-
ներ , ամառ ձմեռ մի և նոյն հանդերձն ու-

նէին , իրենց անկողին եղէ գն էր . սակաւա-
պէտ և ժուժկալ լինելու համար քիչ և մի-
օրինակ կերակուր կ'ուտէին . նեղութեան
և վիշտերու համբերելու համար գաւաղա-
նով կը ծեծէին և ով որ չատ գիմանար՝ այն
մրցանակ կ'առնէր . ասոր համար ամեն
Սպարտացի , կորովի զինուոր էր : Վիդուր-
կոսի օրէնքն ամբողջ կատարել չեմ պահան-
ջեր մեր ազդայիններէն . խօսքս մասնաւո-
րապէս հարուստաներու համար է . մեր աղ-
նիւ Հայաստանցիներ արդէն Սպարտացինե-
րէն նուազ չարքաշ չեն . ուժեղ մարմին ու-
նին արդարեւ , բայց անոնց ալ սիրոն ու
միտք ժամասն ու ճնշեալ է :

ԽԱՂԱՑՈՂ ՄԱՆՈՒԿ

Մանուկներ խաղալով ու խնդալով պէտք
է մեծնան : Որչափ չատ խաղան պնչափ
աւելի լաւ կը զարգանան . առանձին ուշադ-
րութիւն ընելու էր տան և դպրոցի ման-
կանց խաղերուն , որ թէ՛ մարմին կազդու-
րեն և թէ միտք զարդացընեն : Դիտեցէք
փոքրիկ մանկանց սովորական խաղերն ինչ-
պէս մեր վարուց ներկայացումներն են :
հիւր , բժիշկ , գող , թագաւոր , տէրտէր և
ժամու խաղ կը խաղան , այս խաղերն իրենց

բարոյական տպաւորութիւնն ունին : Բայց
ջանալու է տղայք այն տեսակ խաղերով
զբաղեցնել որ աւելի օդտակար ըլլայ :
Տղայոց ամենէն բնական խաղ հողի և ջրի
հետ խաղալն է . կարելի ինչը ամեն տղայք
գէթ իրենց տան մէջ փոքրիկ պարտէզ մը
ունենային և մեծի մը հսկողութեան տակ
փորէին , ցանէին և մշակէին դայն : Գերմա-
նական տղայոց պարտէզներ կ'սպանչացընեն
զմարդ : Նոյնպէս աւելի փոքրիկներ չէնքի
փայտերով , գնտակներով , պատկերներով
և ուրիշ ասոնց նման խաղերով զբաղեցը-
նելու է :

ԴԻՑՈՂ ՄԱՆՈՒԿ

Այն ամեն մարդիկ , որոնք անվայել
շարժումներ և աններելի խօսքեր կ'ընեն ի-
րենց անմեղ մանուկներու առաջ , և կը
կարծեն թէ մանուկներ չեն գիտեր , այն-
պիսիք լւա էր որ մարմոց աչքով կոյր լի-
նէին քան թէ մտօք : Խոկ անոնք որ գի-
տութեամբ կը մեղանչեն , չար օրինակ-
ներ կու տան տղայոց . եթէ հնար լի-
նէր՝ այնպիսին բաղաքական ամենէն ծանր
պատժոյ օրինաց մատնելու էր : Նա իր վա-
սակար ներկայութեամբ բաւական չէ , նո-
րանոր գայթակղութեան , մոլութեան ժա-

— 67 —
ռանդութիւն կ'ուզէ մշտնջենաւորել աշ-
խարհի մէջ :

Տղայք կարծես թէ հաղարաւոր աչքեր
ունին , այնչափ արագ կը լսեն , կը տեսնեն
կ'զգան և կ'օրինակեն , որ չատ անդամ
մենք ոչ կ'զգանք և ոչ կ'ըմբռնենք : Այս
անսեղ սիրուեր և մոգեր ապականող քանի՛
քանի՛ անզգուշութիւններ , այլանդակու-
թիւններ կ'ըլլան բազմաթիւ ընտանիքնե-
րու և ընկերութեանց մէջ : Լաւ ևս էր որ
տղայք տան մը մէջ առանձին սենեակ ու-
նենային իրենց համար , նոյնպէս և ամեն
տեսակ հիւրի առաջ չենէին , և իրենց չը
վերաբերող խօսակցութեանց չի մասնակ-
ցէին :

ԼԻՑԵԱԼ ՄԱՆՈՒԿ

Հայրե՛ր և մայրե՛ր , աղքատներու և
այրիներու լքեալ , որբ և աղքատ մանուկ-
ներ ձեր մանուկներն են . մանուկներու մէջ
գոնէ անիրաւ խարութիւն դնելու չէր . մա-
նուկներ ամեն մարդու համար սիրելի են
զի անմեղ են :

Լքեալ մանուկներով մեր ամբողջու-
թիւնն կը կազմուի , և որ և է նպատակ մը
յառաջ տանիլ գիւրին կը լինի . առներու ,

Դպրոցներու և փողոցներու մէջ, որը որ
գտնուին՝ խնամք տաներու է անոնց . զի
անոնց ծնողք պատառ մը հաց հաղիս կըր-
նան ճարել, դաստիարակութեան վրայ չեն
կարող մտածել : Զեր սիրտ չի կեղեքեր,
երբ կը տեսնէք լքեալ տղայ մը, որ ձեր
սիրելի և փափկասուն տղային հասակակից
է և փողոցներու մէջ կը թափառի քաղցած
փորով և անխնամ . և երբեմն ձեր դուռ
կը զարնէ պատառ մը հաց խնդրելու իր
բաղդաւոր հասակակցէն : Դիտեցէք թէ ի՞նչ
ալէս ճիտը ծռած թշուառ մանկիկն տխուր
տխուր կը նայի ձեր զարդարուն մանկան
զգեստին և իր պատուած խեղճուկ շապի-
կին վրայ, և հրաշունչ հոգոց կը հանէ . . .
այս վիճակ ձեր դութ չի շարժեր :

ՀԱՅ ՄԱՆՈՒԿ

Հայ մանուկներու դաստիարակական
կրթութիւն կատարեալ ինելու համար հարկ
է նաև ճշմարիտ Հայու պարտուց գիտու-
թեամբն զարգանան :


Երբ մի մանուկ իր ազգային պարտուց
անդէա կը մեծնայ, նա որչափ որ դաստի-
արակուած լինի, թերի, 'ի զուր է և անօ-
դուու . վասն զի այն որ իւր անձը սիրել

չդիտէր, իւր ծնողք չի յարգեր, իւր տուն
աեղ պաշտպանել չուզեր և միայն աշխար-
հի մարդ կը համարէ զինքն, նա իրօք ոչինչ
է : Մարդ այնչափ պարտական է իւր ազ-
գութեան, որչափ իւր անձին և իւր ծնո-
ղաց . նոյնպէս մէկն այնչափ կապուած լի-
նելու է իւր հայրենեաց հետ, ինչպէս իւր
գերդաստանի հետ : Եւ շատ գժուարին չէ
մանուկներ փոքրիկ հասակէն ազդասէր և
հայրենասէր մարդիկ պատրաստել . փոր-
ձով կը վկայեմ ասոր դիւրին յաջողու-
թեան : Զեմ ուզեր նկարագրել աստ այն
հայրենասիրութեան և ազդասիրութեան
զմայլելի օրինակ, զոր կը ներկայացընէին
ինձ ազնիւ գերդաստանի մը զաւակներ .
չորս, վեց և տասը տարու մանկութե-
սայ, որք հայրենիք և ազդ իրեւն սի-
րելի գեղեցիկ զգեստ հագեր էին, և որոց
համար կարծես թէ չկար աշխարհիս մէջ
այնչափ սիրուն առարկայ մը քան զչայ և
շայաստան :

Ոհա այն օր կուգայ Հայ մանկանց ար-
քայութիւն երբ ամեն Հայ յիշեալ պան-
ծալի ծնողաց պէս կը դաստիարակէ իւր
որդիք : Մեր հայրեր աւելի նեղ օրերու
մէջ ապրելով չկարողացան պատրաստե-
զմեզ, գէթ մենք պատրաստենք մեր մա-
սուկներ . գոնէ այնչափ փորձ ու փորձանք

ներէ ուշաբերելով՝ մենք ցանենք, որ մեր
որդիք հնձեն, որպէս զի անոնք ալ առանց
սերման՝ հունձքի չսպասեն. անոնք ալ մեզ
պէս ձեռք ծոց, սեւ շիւար գետի եղերք
նստած, « ծարա՛ւ, ծարա՛ւ կը մեռնինք »
չաղաղակեն . . . :





ՀԵՂԻՆԱԿԻՆ ՈՒՐԻՇ ԴԱԲԾԵՐԻ

Շահէնն ՚ի Սիպիր 2 1/2 ֆրար
Վառարանի մը կայծերը :

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

Գին՝ մէկ հինգնոց դրամաթուղթ :

